

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՅԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2008-2012ԹԹ. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Առաջին գլուխ

ԵՐԵՎԱՆ - 2008

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ԳԼՈՒԽ I. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2003-2007 ԹԹ.	6
1.1 Չայաստանում կոռուպցիայի մակարդակի գնահատականը, գերիշխող տեսակները, բնագավառներն ու ոլորտները.....	6
1.2. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա միջոցառումների իրականացման 2003-2007 թթ. ծրագրի արդյունքները	11
1.3. Կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները	27

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ (ADB)
ԱԺ	Ազգային ժողով
ԱՀՈԾ	Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր
ԱՄՆԱԶ	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն (USAID)
ԱՄՊ	Առևտրի միջազգային պալատ
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն (CIS)
ԱՏԵՀՑ	Անցումային տնտեսությամբ երկրների հակակոռուպցիոն ցանց (OECD/CAN)
ԲՀԻ	Բաց հասարակության ինտիտուտ (OSI)
ԲՓՀ	Բերթելսմանի փոխակերպման համաթիվ (BTI)
ԳՍԶՀ	Գործարար միջավայրի և ձեռնարկությունների գործունեության հարցման (BEEPS)
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն (OSCE)
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ (CoE)
ԵԿԱ	Եվրոպայի և կենտրոնական Ասիայի [երկրներ]
ԵՀՔ	Եվրոպական հարևանության քաղաքականության (ENP)
ԶԼՍ	Զանգվածային լրատվության միջոցներ
ԶՎԵԲ	Զարգացման և վերակառուցման եվրոպական բանկ (EBRD)
ԷԱԳ	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Եվրասիական խումբ (EAG)
ԹԻ	Թրանսփարենսի ինթերնեշնլ (TI)
ԿԱ համաթիվ	Կառավարման արդյունավետության համաթիվ
ԿԲ	ՀՀ Կենտրոնական բանկ
ԿԴՊՊԽ	Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խումբ (GRECO)
ԿՈ համաթիվ	Կառավարման որակի համաթիվ
ԿԸՀ	Կոռուպցիայի ընկալման համաթիվ
ԿՀՀ	Կոռուպցիայի վերահսկելիության համաթիվ
ԿՊԽ	Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ
ՀԱԱ	Համախառն ազգային արդյունք
ՀԲ	Համաշխարհային բանկ (WB)
ՀԲԻ	Համաշխարհային բանկի իֆստիտուտ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՈՒՄԾ	Հակակոռուպցիոն ռազմավարություն և դրա իրականացման միջոցառումների ծրագիր
ՀՀ ՖԵՆ	ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն
ՁԻՀ համաթիվ	Ձայնի իրավունքի և հաշվետվողականության համաթիվ
ՄԱԶԾ	Միացյալ ազգերի զարգացման ծրագիր (UNDP)
ՄԱԿԿԿԿ	Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիա (UNCAC)
ՄԱՆԻՎԱԼ	Փողերի լվացման դեմ պայքարի միջոցառումները գնահատող հատուկ փորձագետների հանձնաժողով (MONEYVAL)
ՄԶՆ	Մեծ Բրիտանիայի միջազգային զարգացման նախարարություն (DFID)
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՄՀ	Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողով
ՎՀ	Վճարահաշվարկային
ՏԶԿ/ԹԻ	Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրանսփարենսի ինթերնեշնլ
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (OECD)
ՄՑԵ	Միջինից ցածր եկամուտ ունեցող [երկրներ]
ՓԼ/ԱՖ	Փողերի լվացում և ահաբեկչության ֆինանսավորում
ՔԱ համաթիվ	Քաղաքացիական ազատությունների համաթիվ
ՔԻ	Քաղաքական իրավունքների համաթիվ
ՔԾԽ	Քաղաքացիական ծառայության խորհուրդ
ՔԿ համաթիվ	Քաղաքական կայունության համաթիվ
ՕԳ համաթիվ	Օրենքի գերակայության համաթիվ
ՖԱՏՖ	Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբ (FATF)
ՖԴԿ	Ֆինանսական դիտարկումների կենտրոն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ կառավարությունը կոռուպցիայի դեմ պայքարը ճանաչել է իր գործունեության առանցքային հիմնահարցերից մեկը: 2000թ. մայիսին՝ առաջին անգամ սահմանելով կոռուպցիայի դեմ պայքարի պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, կարևորելով արդյունավետ և կշռադատված կադրային քաղաքականության իրականացումը, պետական ծառայողների սոցիալական և իրավական պաշտպանության պետական երաշխիքների ապահովումը, բարձրաստիճան պաշտոնատար անձանց եկամուտների հայտարարագրումը, պետական գնումները կարգավորող օրենսդրության կիրարկումը, ձեռնարկությունների լիցենզավորման գործընթացն ու պետական գրանցումը, ինչպես նաև տնտեսության ստվերայնացման և քրեականացման դեմ պայքարը¹:
2. Վերջին տարիներին ՀՀ կառավարությունը ընդունելով կոռուպցիայի հետևանքով առաջացող վտանգները՝ կոռուպցիայի դեմ պայքարելու մի շարք քայլեր է ձեռնարկել: Այսպես, 2001-2003թթ. ՀՀ կառավարությունն ամբողջականացրեց կոռուպցիայի դեմ պայքարի պետական քաղաքականությունը, օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմնական շրջանակները²: Մշակվել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների 2003-2007թթ. ծրագիրը³ (ՀՌԻՄԾ), որը սահմանում է կոռուպցիայի դեմ պայքարի պետական քաղաքականությունը: Այսպես, ՀՌԻՄԾ նպատակը կոռուպցիայի հաղթահարումն է, այն ծնող եւ տարածմանը խթանող պատճառների ու պայմանների վերացումը, հանրապետությունում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորումը:
3. Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունների կատարման և ՀՌԻՄԾ իրականացումն ապահովող քաղաքական կամքի դրսևորման կարևորագույն գրավականը կոռուպցիայի դեմ պայքարի, պետական կառավարման արդյունավետ համակարգի ձևավորման ուղղությամբ որդեգրված քաղաքական ուղեմիջներն ու սահմանված թիրախներն են: Մասնավորապես, ՀՀ Նախագահի նախընտրական ծրագիրը ՀՀ կառավարման համակարգի զարգացման 2012թ. թիրախ է ընդունում եվրոպական միության նորանդան երկրների ներկա մակարդակը, նշելով, որ կառավարման համակարգը բնութագրող միջազգայնորեն ընդունված ցուցանիշներով 2012թ. Հայաստանը կգերազանցի այդ երկրների ներկա ցուցանիշներին⁴: Այս քաղաքական պարտավորությունն անմիջականորեն ընկած է սույն ռազմավարության նպատակների և խնդիրների ձևակերպման հիմքում: Մասնավորապես, այս սկզբունքով են ընտրված ՀՌԻՄԾ իրականացման ակնկալվող արդյունքների թիրախները:
4. 2008թ. ապրիլին ՀՀ Ազգային ժողովը հաստատեց ՀՀ Նախագահի 2008թ. փետրվարի 29-ի ընտրությունների արդյունքում ձևավորված կառավարության ծրագիրը, որում կոռուպցիայի դեմ պայքարը ճանաչվում է պետական քաղաքականության գլխավոր բաղադրիչներից մեկը⁵: ՀՀ կառավարությունը կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի և հասարակության վստահության ապահովման գլխավոր նախապայման է համարում իրական քաղաքական մրցակցությունն ապահովող բազմակուսակցական համակարգի լիարժեք կայացումը: ՀՀ կառավարության ծրագրի շրջանակներում առանձնակի ուշադրություն է հատկացվելու իրավապահ մարմինների գործունեության արդյունքում հայտնաբերված կոռուպցիոն դեպքերի լուսաբանման ապահովմանը: ՀՀ կառավարությունը նախանշել է ՀՌԻՄԾ հիմնական ուղղությունները. մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանություն, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացում, կոռուպցիայի դեմ պայքարի մասին հասարակությանն իրազեկում, կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության ներգրավում և այդ գործընթացում նրա ակտիվության բարձրացում, պետական կառավարման համակարգի կատարելագործում, պետական կառավարմանը հասարակության մասնակցության արդյունավետության բարձրացում, օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքի ապահովում՝ հասարակության բոլոր անդամների համար, այդ թվում՝ իշխանավորների, տնտեսավարողների համար հավասար մրցակցային դաշտի ձևավորում և ստվերային տնտեսության կրճատում: ՀՀ կառավարությունը պարտավորվել է նաև հետանուտ լինել ՀՌԻՄԾ-ում ԳՐԵԿՈ-ի և ՏՀԿԿ անցումային տնտեսություններ ունեցող երկրների հակակոռուպցիոն ցանցին ՀՀ անդամակցությունից բխող պարտավորությունների և ՄԱԿԿԿ պարտավորությունների կատարմանը, ինչպես նաև դրանցից բխող իրավական ակտերի ընդունմանը:
5. Արդյունավետ պետական կառավարումը, մասնավորապես պայքարը կոռուպցիայի դեմ, ճանաչվել է ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության գերակա ուղղություններից մեկը: Այսպես, ՀՀ

¹ Հայաստանի հանրապետության կառավարության գործունեության ծրագիրը: Երևան 2000թ.: էջ 15-16, 24-25:

² ՀՀ Վարչապետի 2001թ. հունվարի 22-ի թիվ 44 որոշմամբ ստեղծվեց ՀՀ կառավարության հակակոռուպցիոն ծրագրերի հետ կապված աշխատանքները համակարգող հանձնաժողով՝ ՀՀ Վարչապետի գլխավորությամբ:

³ Հաստատված է «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 6-ի թիվ 1522-Ն որոշմամբ:

⁴ Սերժ Սարգսյան, Նախընտրական ծրագիր: ՀՀ Նախագահի ընտրություններ 2008 էջ. 18

⁵ «ՀՀ կառավարության ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2008թ. ապրիլի 30-ի թիվ Ե-074 որոշում:

Ազգային անվտանգության ռազմավարությունը ամրագրել է, որ ինստիտուցիոնալ բարեփոխումները մասնավորապես միտված են ժողովրդավարական պետության հզորացմանը, պետական կառավարման մարմինների արդյունավետ գործունեության, դատական իշխանության անկախության և անաչառության ապահովմանը, որոշումների նախապատրաստման և վերահսկողության գործընթացներում քաղաքացիական հասարակության դերի բարձրացմանը, կոռուպցիայի, մասնավորապես կաշառակերության դեմ պայքարի ուժեղացմանը⁶:

⁶ «ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի 2007թ փետրվարի 7-ի թիվ ՆՂ-37-Ն հրամանագիր (ուժի մեջ է 2007թ. փետրվարի 25-ից): Հավանության է արժանացել ՀՀ Նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի 2007 թ. հունվարի 26-ի նիստում:

ԳԼՈՒԽ I. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2003-2007 ԹԹ.

1.1 Հայաստանում կոռուպցիայի մակարդակի գնահատականը, գերիշխող տեսակները, բնագավառներն ու ոլորտները

6. Կոռուպցիայի ընդհանուր մակարդակի գնահատման հիմնական միջազգային ցուցիչները ձևավորվում են մասնագիտացված հետազոտությունների և հարցումների արդյունքների համախմբման հիման վրա: Ներկայում կոռուպցիայի մակարդակի գնահատման միջազգայնորեն ճանաչված ցուցիչներ են համարվում «Թրանսպարենսի Ինքերնեշնլի» (ԹԻ) կազմակերպության կողմից հրապարակվող Կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՀ)⁷, Համաշխարհային բանկի ինստիտուտի (ՀԲԻ) կողմից հրապարակվող Կոռուպցիայի հսկողության համաթիվը (ԿՀՀ)⁸ և Ֆրիդոմ Հաուզ կազմակերպության կողմից հրապարակվող Ազգերն անցումային շրջանում զեկույցի կոռուպցիայի համաթիվը⁹:
7. Հայաստանում Կոռուպցիայի ընկալման համաթիվը 1999-2000 թվականների 2.5 միավորը¹⁰ հետագա տարիներին տատանվելով 3.0 միավորի շուրջ, 2007թ.-ին կազմել է 3.0: Հայաստանը 163 երկրների շարքում զբաղեցնելով 99-րդ հորիզոնականը, առավել բարվոք դիրք է գրավում թե՛ ԱՊՀ երկրների, թե՛ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի 20 երկրների շարքում:
8. Համաձայն Համաշխարհային Բանկի Ինստիտուտի Կոռուպցիայի Հսկողության Համաթվի (ԿՀՀ), Հայաստանում կոռուպցիայի հսկողությունը 2006թ.-ին բարելավվել է¹¹: 2006թ. Հայաստանը 209 երկրների շարքում գտնվել է 35-րդ տոկոսային հորիզոնականում¹²: Այս ցուցանիշով ՀՀ-ն ԱՊՀ երկրների շարքում գրավում է երկրորդ տեղը, զիջելով միայն հարևան Վրաստանին¹³: ԿՀՀ համաթիվով 2006թ. Հայաստանը զիջում է թե՛ ԵԿԱ երկրների միջին ցուցանիշին, թե՛ Կենտրոնական և արևելյան Եվրոպայի երկրների միջինին, թե՛ ցածր միջին եկամուտ ունեցող երկրների միջինին: Միաժամանակ, այս ցուցանիշով Հայաստանը գերազանցում է ՄՑԵ խմբում ԵԿԱ տարածաշրջանի միջին ցուցանիշը (տե՛ս աղյուսակ N1 և 2):

Աղյուսակ 1. Հայաստանի համար ՀԲԻ կառավարման ցուցանիշների դինամիկան (տոկոսային գնահատական, 0-100, 1998-2006թթ.)¹⁴

	1998	2000	2002	2003	2004	2005	2006
1. Կարգավորման որակ	26.6	28.1	56.7	57.1	53.2	56.9	59.0
2. Կառավարման արդյունավետություն	29.7	18.7	45.5	45.5	44.5	49.3	51.2
3. Ձայնի լսելիություն և հաշվետվողականություն	35.3	37.2	34.8	33.3	30.0	30.4	26.9
4. Քաղաքական կայունություն	22.6	17.9	23.6	28.3	31.6	38.2	35.1
5. Օրենքի գերիշխանություն	38.0	36.1	35.6	39.4	38.0	41.5	38.1
6. Կոռուպցիայի հսկողություն	21.6	23.0	32.4	33.8	28.9	33.5	35.0

⁷ http://www.transparency.org/policy_and_indices/cpi

⁸ www.worldbank.org/wbi/governance/govdata

⁹ <http://www.freedomhouse.org/template.cfm?page=47&nit=388&year=2006>

¹⁰ ԿԸՀ-ն երկրում կոռուպցիայի ընկալումը գնահատում է 0-ից 10 սանդղակով, ուր “0”-ն համապատասխանում է կոռուպցիայի առավել սուր, իսկ “10”-ն՝ ամենաանցանց ընկալմանը:

¹¹ 15 աղբյուրների վրա հիմնված 2006թ. ԿՀՀ համաթիվի –2.5 արժեքը համապատասխանում է կոռուպցիայի հսկողության ամենավատ աստիճանին, իսկ 2.5-ը՝ ամենալավ:

¹² ԿՀՀ համաթիվի և կառավարման մյուս գործակիցների հիման վրա երկրները դասակարգված են 0-100 տոկոսային խմբերի սանդղակով:

¹³ Governance matters VI: Aggregate and Individual Governance Indicators 1996-2006. էջ 76-93: <http://www.worldbank.org/wbi>.

¹⁴ Նույն տեղում:

Աղյուսակ 2. ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի երկրների կառավարման համակարգի ցուցանիշները 2006թ. (տոկոսային զնախատական, 0-100)¹⁵

	Կոռուպցիայի հսկողություն	Կառավարման արդյունավետություն	Կարգավորման որակ	Ձայնի լսելիություն և հաշվետվողականություն	Քաղաքական կայունություն	Օրենքի գերիշխանություն
Սլովենիա	81.1	84.4	72.7	84.6	82.7	75.2
Էստոնիա	80.1	85.3	92.2	78.8	71.2	80.5
Լատվիա	68.4	73.5	82.4	72.6	73.6	63.8
Չեխիա	66.0	80.1	79.5	77.4	70.2	73.3
Սլովակիա	65.5	78.2	83.4	78.4	76.4	61.4
Լեհաստան	60.2	69.2	69.3	76.9	54.3	59.0
Բուլղարիա	57.3	60.2	66.3	65.4	57.2	50.0
ԱԵ և ՄԲ* միջինը	56.3	62.1	65.7	65.3	56.6	53.3
Ռումինիա	53.4	53.6	62.0	61.5	50.0	50.5
Վրաստան	44.7	50.7	44.4	44.7	21.6	32.9
Հայաստան	35.0	51.2	59.0	26.9	35.1	38.1
Սլովոակ	30.1	22.3	41.5	32.7	29.8	32.4
ԱՊՀ միջինը	22.2	26.3	28.2	21.3	27.2	20.0
Բելառուս	21.4	10.4	4.9	4.3	52.4	11.9
Տաջիկստան	18.9	14.2	17.6	11.1	10.6	12.9
Ղազախստան	18.4	33.6	36.1	19.7	46.2	23.8
Ադրբեջան	15.0	27.5	34.1	14.9	15.9	22.4
Ղրղզստան	10.2	21.3	28.3	27.9	13.0	10.5

*Արևելյան Եվրոպայի և Մերձբալթյան երկրներ

- Հայաստանում կոռուպցիայի հիմնական տեսակները կարելի է դասակարգել հետևյալ խմբերի. գործառնական, վարչական և քաղաքական կոռուպցիա:
- Գործառնական կոռուպցիան** ուղղված է գործընթացներն ու պաշտոնական ընթացակարգերն արագացնելուն և գործառնական ծախսերը կրճատելուն՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի և օրինական գործառնությունների շրջանակներում քաղաքացուն կամ տնտեսվարողին հանրային ծառայությունները, մասնավորապես, սահմանվածից կարճ ժամկետում մատուցելու նպատակով:
- Գործընթացներն արագացնելուն և գործառնական ծախսերը կրճատելուն ուղղված կոռուպցիան հայաստանյան ընկերությունները դիտում են որպես իրենց գործունեության համեմատաբար երկրորդական խոչընդոտ: ՀԲԻ-ի տվյալների համաձայն հայաստանյան ընկերությունների շուրջ 10%-ն է համարում, որ ոչ պաշտոնական վճարներ կատարում է հաճախակի¹⁶: Ոչ պաշտոնական վճարները մեծ բեռ են հատկապես փոքր ձեռնարկությունների համար՝ կազմելով տարեկան իրացման շուրջ 1.2%-ը: Հատկանշական է նաև, որ պետական ծառայողների հետ շփման և պաշտոնական ընթացակարգերի վրա ավելի շատ ժամանակ տրամադրում են միջին և մեծ ձեռնարկությունների ղեկավարները: Համեմատության համար նշենք, որ ՄՑԵ երկրներում գործարարները գրեթե կրկնակի ավելի ժամանակ են հատկացնում պաշտոնյաների հետ շփումներին և վարչական ընթացակարգերին քան նրանց հայաստանյան գործընկերները: ԵԿԱ երկրների համեմատ ևս հայաստանյան գործարարները նվազ ծանրաբեռնված են պաշտոնական կամ վարչական փոխհարաբերություններով:
- Գործառնական կոռուպցիայի մակարդակը կրճատվել է կարգավորման քաղաքականության և կարգավորման մեխանիզմների շարունակական բարելավման հաշվին: Համաձայն ՀԲԻ Կարգավորման որակի (ԿՈ) համաթվի 1996թ. Հայաստանը գտնվում էր կարգավորման առավել վատ համակարգեր ունեցող երկրների ամենացածր խմբում, իսկ 2003 թվականին այդ ցուցանիշը թռիչքաձև բարելավվել է, իսկ Հայաստանը դիրքերն ամրապնդել է երկրների միջինից բարձր՝ 55-ից 60 տոկոսային խմբում¹⁷: Միաժամանակ, նվազել է այն գործարարների թիվը, ովքեր կառավարության քաղաքականության բարդությունն ու ոչ թափանցիկությունը համարել են

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Armenia BEEPS-at-a-Glance. The World Bank. էջ 4: <http://go.worldbank.org/RQQXYJ6210>.

¹⁷ Governance matters 2007. Worldwide Governance Indicators, 1996-2006. Country Data Report for Armenia, 1996-2006. էջ 5: <http://www.worldbank.org/wbi/governance>.

ծեռնարկատիրության համար էական կամ հիմնական խոչընդոտ¹⁸: Հատկանշական է նաև, որ նշված ժամանակահատվածներում կարգավորման որակի բարելավումն ուղեկցվել է կառավարման ընդհանուր արդյունավետության բարձրացմամբ¹⁹: ՀՀԻ Կարգավորման որակի և կառավարման արդյունավետության 2006թ. համաթվերով Հայաստանը առաջ է եԿԱ երկրների միջին ցուցանիշից, սակայն զիջում է Կենտրոնական և արևելյան եվրոպայի երկրների միջինին: Միաժամանակ, այս ցուցանիշներով Հայաստանը գերազանցում է թե՛ ցածր միջին եկամուտ ունեցող երկրների միջինը, թե՛ ՄՑԵ խմբում եԿԱ տարածաշրջանի միջին ցուցանիշը:

13. **Վարչական կոռուպցիայի** պարագայում խախտվում կամ վերապահորեն են կիրարկվում գործող իրավական նորմերը: Ըստ ԳՄՁԳՀ արդյունքների²⁰ հայաստանյան ընկերությունների շուրջ 1/3-ը համարում են, որ կոռուպցիան խոչընդոտում է իրենց գործունեությանը, իսկ 20%-ը կոռուպցիան համարում են ձեռնարկատիրական գործունեության հիմնական խոչընդոտ: Ավելին, հարկային վարչարարությունը և կարգավորիչ քաղաքականության անորոշության բարձր աստիճանը հայաստանյան ընկերություններն ընկալում են որպես ձեռնարկատիրության հիմնական խոչընդոտ:
14. Տնային տնտեսությունների մեծամասնությունը կոռուպցիոն գործարքների հիմնական դրդապատճառների թվում ևս նշում է վարչական կոռուպցիայի տարբեր դրսևորումները: Այսպես, հարցվածների շուրջ 42%-ը համարում է, որ առանց կոռուպցիայի հնարավոր չէ “գործերն առաջ տանել”, 28.5%-ը համարում է, որ կոռուպցիոն գործարքների դրդապատճառը պատժամիջոցներից խուսափելն է, 18.7%-ը կոռուպցիայի դրդապատճառ է համարում պաշտոնական բարձր վճարներից խուսափելը, իսկ 25.4%-ը կոռուպցիան արդարացում է եկամտի լրացուցիչ աղբյուր ձեռք բերելու ձգտումով²¹:
15. Համաձայն ՀՀԻ Օրենքի գերայակության (ՕԳ) համաթվի, վարչական կոռուպցիայի մակարդակի աճն ուղեկցվել է օրենքի գերակայության ապահովման մակարդակի հարաբերական վատթարացմամբ²²: 2006թ. այս համաթվով Հայաստանը առաջ է եԿԱ երկրների միջին ցուցանիշից, սակայն զիջում է Կենտրոնական և արևելյան եվրոպայի երկրների միջինին:
16. Ըստ ՀՀԻ տվյալների, 2005 թվականին ընկերությունների 47.5%-ը վստահություն չի հայտնել սեփականության իրավունքի պաշտպանության և պայմանագրերի կատարման ապահովման իրավական համակարգի հանդեպ: Ընդ որում, սեփականության և ձեռնարկատիրական իրավունքների պաշտպանության իրավական համակարգի հանդեպ անվստահությունն առանձնապես ահագանգող է փոքր ձեռնարկությունների շրջանում: Այս առումով, Հայաստանի համեմատ, թե՛ եԿԱ, թե՛ ՄՑԵ երկրներում, գործարարները միջինում ավելի են վստահում իրավական համակարգին²³:
17. Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) 2006թ. զեկույցը²⁴ փաստում է, որ հանրային մարմինները քաղաքացիների դիմում-բողոքների հետ առնչվելիս միշտ չէ, որ ղեկավարվում են իրավունքի գերակայության սկզբունքով կամ ելնում են “Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին” ՀՀ օրենքով ամրագրված սկզբունքներից²⁵: Դատարանների դեմ 2004-2006թթ ՄԻՊ գրասենյակին ուղղված բողոքները շարունակաբար գերակշռել են²⁶: Ինչպես նշում է ՄԻՊ 2006թ. զեկույցը բողոքների նման քանակը հիմք է տալիս եզրահանգելու, որ բնակչության վստահությունը դատարանների հանդեպ հեռու է բավարար լինելուց: Վարչական կոռուպցիայի դրսևորման առավել ռիսկային բնագավառներն ու ոլորտներն են նշված առողջապահության, կրթության, աշխատանքի և սոցիալական ապահովության ոլորտները, ինչպես նաև ոստիկանության, դատախազության, ՀՀ արդարադատության և ՀՀ պաշտպանության նախարարությունների համակարգերը, Երևանի քաղաքապետարանը, մարզպետարանները և տեղական ինքնակառավարման մարմինները²⁷:

¹⁸ Assessment of Administrative Procedures or Doing Business in Armenia. Part I. Summary, Background, and Overarching Issues. Foreign Investment Advisory Service a joint service of the International Finance Corporation and The World Bank. July 2004. էջ 31:

¹⁹ Governance matters VI: Aggregate and Individual Governance Indicators 1996-2006. էջ 76-93: <http://www.worldbank.org/wbi>.

²⁰ Կոռուպցիայի դեմ պայքարը անցումային տնտեսությամբ երկրներում. ը՞վ է հասել հաջողությունների... և ինչու: Ջեյնս Անդերսոն, Չերիլ Գրեյ: Համաշխարհային Բանկ: 2006թ., էջ: 9:

²¹ Corruption Perception in Armenia 2006. Center for Regional Development/ Transparency International Armenia. <http://www.transparency.am>. էջ 19:

²² Governance matters VI: 2007. Worldwide Governance Indicators, 1996-2006. Country Data Report for Armenia, 1996-2006. էջ 6: <http://www.worldbank.org/wbi/governance>.

²³ Investment Climate Surveys. Country Profile. Armenia 2005 Survey. էջ 13: <http://rru.worldbank.org/InvestmentClimate>.

²⁴ Տարեկան զեկույց 2006թ.: ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի 2006թ. զեկույցը: էջ 104.: <http://www.ombuds.am>.

²⁵ Նույն տեղում, էջ 89:

²⁶ Տարեկան զեկույց 2004թ. ընթացքում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին: էջ 18.

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի 2005թ. տարեկան զեկույցը: էջ 4.: <http://www.ombuds.am>

²⁷ Տարեկան զեկույց 2006թ.: ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի 2006թ. զեկույցը: էջ 89.: <http://www.ombuds.am>.

18. ԳՄԶԳ 2005թ. արդյունքների համաձայն, հայաստանյան ընկերությունները համարում են, որ ոչ պաշտոնական վճարներ առավել հաճախ կատարում են հարկային և մաքսային պարտավորությունների կատարման ու ներկրման, պետական պատվերներ ձեռք բերելու, ձեռնարկատիրական գործունեության իրականացման արտոնագրեր և թույլտվություններ ստանալու, հանրային ծառայությունների (էլեկտրականություն և հեռախոս) բաժանորդագրման և սպասարկման, ինչպես նաև տեսչական գործառնություններ իրականացնող տարբեր կառույցների հետ առընչվելիս: Հատկանշական է, որ 2002թ. համեմատ 2005թ.-ին կտրուկ՝ շուրջ տասն անգամ, ավելացել է այն ընկերությունների թիվը, որոնք ոչ պաշտոնական վճարների կատարումը համարել են հաճախակի դատարանների և պետական գնումների համակարգի հետ առընչվելիս: Ընդ որում, ընկերությունների մեծամասնությունը ոչ պաշտոնական վճարները հաճախակի է համարում հարկային ոլորտում²⁸:
19. **Քաղաքական կոռուպցիայի** պարագայում կոռուպցիոն գործարքն ուղղված է օրենսդրական կամ կարգավորիչ նորմերի փոփոխությանը՝ մասնավոր ամծի կամ խմբի շահերին համապատասխան, և հանրային քաղաքականությունը ծառայեցնում է մասնավոր շահերին, որը հանգեցնում է մրցակացության միջավայրի և քաղաքացիական հասարակության կայացման խաթարմանը:
20. 2002-2006թթ. Հայաստանում քաղաքական կոռուպցիայի դրսևորումների, մասնավորապես ձայնի իրավունքի և հաշվետվողականության²⁹, քաղաքական իրավունքների, ընտրական գործընթացների օրինականության³⁰, քաղաքացիների արտահայտվելու և միավորման ազատության, մանուկի ազատության մակարդակի գնահատման միջազգային ցուցանիշները էական փոփոխություն չեն կրել:
21. Ֆրիդոմ Հաուզ կազմակերպության Ազգերն անցումային շրջանում գեկույցի մաս կազմող կոռուպցիայի համաթիվը Հայաստանի համար գնահատվում է 1999թ.-ից ի վեր: Նախորդ տարիներին այն մնացել է անփոփոխ կազմելով 5.75 միավոր³¹: Ըստ գեկույցի տվյալների Հայաստանում ընտրական գործընթացներին, լրատվամիջոցների ազատությանը և քաղաքացիական հասարակության կայացմանը 2007թ. նախորդող տասնամյակում էականորեն չի փոփոխվել³²: 2004թ.-ից հրապարակվող Երկրները խաչմերուկում գեկույցի համաձայն³³ 30 անցումային եկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է միջինից բարձր դիրքեր՝ քաղաքացիական ազատությունների, օրենքի իշխանության, կոռուպցիայի դեմ պայքարի և թափանցիկության, հաշվետվողականության և ձայնի իրավունքի առումով:
22. Համաձայն միջազգայնորեն ընդունված հեղինակավոր կազմակերպությունների, բավարար չափով կայացած և ուժեղ չեն հայաստանյան լրատվամիջոցները և հետևաբար, չեն կարող քաղաքացիներին ապահովել լրատվամիջոցների պատշաճ ազատությունը, լրագրողական պրոֆեսիոնալիզմը և տեղեկատվության բազմակարծությունը³⁴: Տնային տնտեսությունների հարցման արդյունքների համաձայն, քաղաքացիների մեծամասնությունը համարում է, որ կոռուպցիայի մակարդակն ամենաբարձրն է ընտրական համակարգում, իսկ հարցվածների 95%-ը համարում է, որ ընտրական համակարգն այս կամ այն չափով կոռումպացված է:
23. Ըստ ՀԲԻ տվյալների ընկերությունների շուրջ 42%-ը ձեռնարկատիրական գործունեության հիմնական խոչընդոտների շարքում նշել է հակամրցակցային միջավայրը³⁵: Բերթելսման հիմնադրամի 2008թ. գեկույցը³⁶ նշում է, որ չնայած կոռուպցիայի դեմ պայքարի Հայաստանի իշխանությունների ջանքերին և ԱՊՀ տարածքում լավագույն կարգավորիչ համակարգերից մեկն ունենալու հանգամանքին, քաղաքական կոռուպցիայի դրսևորումների հետևանքով տնտեսական մրցակցության խոցելի միջավայրը շարունակաբար վտանգում է Հայաստանի հետագա տնտեսական զարգացմանը³⁷:
24. Ըստ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ), Հայաստանում քաղաքացիական հասարակությունը գնահատվում է որպես թույլ, իսկ հասարակական

²⁸ Armenia BEEPS-at-a-Glance. The World Bank. էջ 13: <http://go.worldbank.org/RQQXYJ6210>.

²⁹ Governance matters VI: 2007. Worldwide Governance Indicators, 1996-2006. Country Data Report for Armenia, 1996-2006. էջ 2: <http://www.worldbank.org/wbi/governance>.

³⁰ Bertelsmann Stiftung, BTI 2008 - Armenia Country Report. Göttersloh: Bertelsmann Stiftung, 2007:

³¹ Country Report Armenia 2006. Freedom House. 2007. <http://www.freedomhouse.org/template.cfm?page=47&nit=388&year=2006>.

³² Country Report Armenia 2006. Freedom House. 2007. <http://www.freedomhouse.org/template.cfm?page=47&nit=388&year=2006>.

³³ <http://www.freedomhouse.org/template.cfm?page=140&edition=7&ccrpage=31&ccrcountry=109>

³⁴ Media Sustainability Index 2006/2007. The Development of Sustainable Independent Media in Europe and Eurasia. IREX. www.irex.org/msi.

³⁵ Business Climate, Productivity, and Competitiveness in Armenia: 2002-2005. Giuseppe Iarossi, Federica Saliola, Giovanni Tanzillo. July 11th, 2006. էջ 17:

³⁶ Bertelsmann Stiftung, BTI 2008 - Armenia Country Report. Göttersloh: Bertelsmann Stiftung, 2007:

³⁷ Նույն տեղում:

կազմակերպությունների գործունեության օրենսդրական միջավայրը 2003թ-ից էական փոփոխություններ չի կրել: 2003-2006թթ. առաջընթաց չի արձանագրվել նաև քաղաքացիական հասարակության կառույցների ենթակառուցվածքի և կազմակերպական կարողությունների առումով: Ավելին, չնայած հասարակական կազմակերպությունների ֆինանսական կայունության աստիճանի որոշակի բարելավմանը, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից շահերի պաշտպանության գործունեությունը և հասարակական կազմակերպությունների հանրային ընկալումը նույն ժամանակահատվածում վատթարացել են³⁸:

25. Այսպիսով, Հայաստանի զարգացման ներկա փուլում կոռուպցիայի մակարդակի, գերիշխող տեսակների, բնագավառների ու ոլորտների գնահատականները վկայում են որ.
- ՀՀ-ում 2003-2006թթ. կոռուպցիայի ընդհանուր մակարդակը գնահատող ցուցանիշները հիմնականում փոփոխություններ չեն կրել, իսկ Հայաստանը շարունակում է դասվել կոռուպցիայի բարձր մակարդակ ունեցող երկրների շարքին:
 - Կոռուպցիայի ընդհանուր մակարդակի գնահատման ցուցանիշներով Հայաստանն առավել բարենպաստ դիրքերում է ԱՊՀ երկրների շարքում, սակայն էապես գիջում է Արևելյան Եվրոպայի և Մերձբալթյան երկրների կոռուպցիայի ընդհանուր մակարդակի համապատասխան ցուցանիշներին:
 - Գործառնական կոռուպցիայի մակարդակի կրճատմանը նպաստել է կարգավորման քաղաքականության և մեխանիզմների շարունակական ու զգալի կատարելագործումը, ընդ որում կարգավորման որակի բարելավումը հստակորեն ուղեկցվել է կառավարման ընդհանուր արդյունավետության բարձրացմամբ:
 - Անձանց օրինական շահերի պաշտպանությանն ուղղված օրենքի գերակայության ապահովման թերությունների, դատական համակարգի հանդեպ անվստահության և այլ պատճառներով վատթարացել են վարչական կոռուպցիայի մակարդակը նկարագրող ցուցիչները, ընդ որում, այդ ցուցանիշներով Հայաստանը զգալիորեն ետ է մնում Կենտրոնական և արևելյան Եվրոպայի երկրներից:
 - Քաղաքական կոռուպցիայի բարձր մակարդակի պայմաններում խոցելի է դառնում տնտեսական մրցակցության միջավայրը: ՀՀ քաղաքացիները ընտրական համակարգը համարում են կոռումպացված, իսկ վերջին տարիներին քաղաքացիական հասարակության կառույցների որոշակի թուլացումն էականորեն սահմանափակում է քաղաքական կոռուպցիայի դրսևորումներին դիմակայելու դրանց դերն ու կարողությունները:

³⁸ Նույն տեղում:

1.2. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա միջոցառումների իրականացման 2003-2007 թթ. ծրագրի արդյունքները

26. **ՀՌԻՄԾ-ն** սահմանում է կոռուպցիան ու դրա հիմնական պատճառները, նշում է կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական միջոցներն ու ուղղությունները: Կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական միջոցներն են օրենքի գերակայության վրա հիմնված պետական արդար կառավարման համակարգի ստեղծումը, գործադիր, օրենսդիր, դատական իշխանության մարմինների, ինչպես նաև պետական ծառայության, վերահսկողության մարմինների եւ աուդիտորական հաստատությունների, լրատվամիջոցների, մասնավոր ոլորտի, գնումների, տեղական ինքնակառավարման համակարգերում արդար կառավարման համակարգի սկզբունքների ներդրումը, կոռուպցիոն երեւույթների բացահայտումն ու դրանցում ներգրավված մարդկանց համապատասխան պատասխանատվության ենթարկելը, հանրային իրազեկության կամակերպումը, հասարակության մասնակցությունը կոռուպցիայի դեմ պայքարում:
27. **ՀՌԻՄԾ-ն առավելապես կողմնորոշված էր կոռուպցիայի կանխարգելման միջոցառումների, նոր ինստիտուցիոնալ կառույցների, օրենսդրական դաշտի կատրելագործմանը՝** կարևորելով կոռուպցիայի դեմ պայքարում հասարակության լայն մասնակցությունը և հակակոռուպցիոն միջոցառումների մոնիտորինգի դերը: ՀՌԻՄԾ-ը միջոցառումների ծրագիրը ներառում էր շուրջ 100 մեկնագամյա և պարբերական (6 միջոցառում) միջոցառումներ՝ տնտեսական (44 միջոցառում) և քաղաքական (7 միջոցառում) ոլորտներում, պետական կառավարման (13 միջոցառում), իրավապահ մարմինների (7 միջոցառում) և դատական (10 միջոցառում) համակարգերում, այնպիսի թեմատիկ ուղղություններով, ինչպես հանրային ֆինանսների կառավարումը, պետական գույքի մասնավորեցումը և պետական գնումները, ինչպես նաև հարկային վարչարարության, առողջապահության, կրթության և այլ բնագավառներ: ՀՌԻՄԾ որոշ բնութագրական միջոցառումներ վերաբերվում էին օրենսդրական բացերի և հակասությունների վերացմանը՝ օրենսդրական նախագծերի փորձաքննության և կոռուպցիոն ռիսկերի բացահայտման միջոցով, կոռուպցիայի դեմ պայքարելու իրավապահ մարմինների կարողությունների զարգացմանը՝ նրանց մասնագիտական հմտությունների զարգացման և անհրաժեշտ սարքավորմամբ ապահովելու, ինչպես նաև իրավապահ մարմինների աշխատակիցների վարձատրության և սոցիալական ապահովության մեխանիզմների կատարելագործման և վարքագծի կանոնների ներդրման միջոցով:
28. Ընդհանուր առմամբ **ՀՌԻՄԾ 2003-2007թթ. միջոցառումների ծրագրի շրջանակներում կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ ընդունվեցին ավելի քան հիսուն օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր**, ձևավորվեցին կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված հիմնական կառույցները, ընդունվեցին և վավերացվեցին կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային կարևորագույն կոնվենցիաներն ու համաձայնագրերը, երկիրն անդամակցեց կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ միջազգային համագործակցությունն ապահովող ամենահեղինակավոր կազմակերպություններին³⁹:
29. Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն քաղաքականության ամբողջական և արդյունավետ իրականացումն ապահովելուն ուղղված պետական լիազորված մարմինների գործունեության համադրման և կոռուպցիայի առաջացման ու տարածման պատճառները վերացնելու, դրանց կանխարգելման ուղղությամբ տարվող պետական քաղաքականությունը կատարելագործելու նպատակով 2004թ. հունիսին ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծվեց **Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ**⁴⁰ (ԿՊԽ):
30. ԿՊԽ կանոնակարգի համաձայն ստեղծվեց նաև **Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողով** (ՄՀ): ՄՀ-ն ՀՌԻՄԾ իրականացման աշխատանքների և գերատեսչական հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման մասնակցային մոնիտորինգի արդյունքների հիման վրա ՀՌԻՄԾ վերաբերյալ ԿՊԾ-ին առաջարկություններ տրամադրող հիմնական մեխանիզմն է: ԿՊԽ-ի և ՄՀ-ի գործառնություններն և դրանց գործունեության արդյունավետության բարձրացման խնդիրներին առավել մանրամասն անդրադառնում է սույն փաստաթղթի երկրորդ գլխի 2.4 բաժինը:
31. **Կոռուպցիայի դեմ պայքարի համակարգված և արդյունավետ քաղաքականության իրականացումն ապահովելուն կոչված կառույցների ձևավորմանն ու կայացմանը զուգահեռ, ստեղծվեցին նաև կոռուպցիայի կանխարգելման, բացահայտման ու հետապնդման մասնագիտացված գործառնություններ իրականացնող մի շարք կառույցներ և**

³⁹ Կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ միջազգային համագործակցության մասին մանրամասն տես սույն ռազմավարության 1.3 բաժինը

⁴⁰ ՀՀ Նախագահի 2004թ. հունիսի 1-ի թիվ ՆՀ-100-Ն հրամանագիրը «Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ ստեղծելու մասին»: (ուժի մեջ է 2004թ. հունիսի 10-ից):

ստորաբաժանումներ: Այսպես, 2004թ. ապրիլին ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքում ստեղծվեց կոռուպցիայի դեմ պայքարի բաժին, որը հետագայում վերակազմավորվեց կոռուպցիայի դեմ պայքարի վարչության: Միաժամանակ ՀՀ ոստիկանության և ազգային անվտանգության կառույցների համապատասխան ստորաբաժանումներում առանձնացվեցին կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված օղակներ:

32. Նշանակալի էր առանձին օրենքներով, արդյունավետ և թափանցիկ սկզբունքներով **ՀՀ քաղաքացիական ծառայության և պետական առանձին ծառայությունների (հարկային, մաքսային, ոստիկանություն, դիվագիտական, փրկարարական և այլն) ձևավորումը:** Այս կառույցների ստեղծումը հնարավորություն ընձեռեց ձևավորել պետական պաշտոնյաների և ծառայողների համար վարքագծի կանոնների սահմանման, նրանց վարձատրության, եկամուտների և գույքի հայտարարագրման համակարգերը: Համանման նորմեր և դրույթներ են պարունակում նաև ՀՀ դատախազության մասին նոր օրենքը և դատական ծառայության մասին ՀՀ օրենքը, ուր մանրամասն նկարագրվում են դատական և դատախազական մարմինների աշխատակիցների ազնվության մեծացման և վարքագծի վերաբերյալ կանոնները:
33. **Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի ոլորտում:** Օրենսդրորեն հստակեցվել, կանոնակարգվել և ինստիտուցիոնալիզացվել են անօրինական գործարքների միջոցով գույք և եկամուտներ ձեռք բերելու դեմ պայքարի մեխանիզմները: Այսպես, ՀՀ Քրեական օրենսգիրքը քրեականացրել է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացումը՝ փողերի լվացումը (հոդված 190)⁴¹: ՀՀ-ն վավերացրել է այս ոլորտում կարևորագույն կոնվենցիաներն ու միջազգային համաձայնագրերը: 2004թ. ընդունվել է «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը⁴², որը հիմնականում համապատասխանում է Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի (ՖԱՏՖ)-ի միջազգային ստանդարտներին⁴³ և կարգավորում է ՀՀ-ում ՓԼ/ԱՖ դեմ պայքարում գործառույթներ իրականացնող մարմինների փոխհարաբերությունները:
34. ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) խորհրդի, որոշմամբ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի արդյունավետ և համակարգված իրականացման նպատակով 2005թ. մարտին ստեղծվեց ՀՀ ԿԲ Ֆինանսական դիտարկումների կենտրոնը⁴⁴ (ՖԴԿ), որն ուսումնասիրում է կասկածելի գործարքները և կարող է ՀՀ ԿԲ խորհրդին եզրակացություն տրամադրել դրանց սառեցման կամ կասեցման վերաբերյալ: ՀՀ-ն Եվրոպայի խորհրդի Փողերի լվացման դեմ պայքարի միջոցառումները գնահատող հատուկ փորձագետների հանձնաժողովի (ՄԱՆԻՎԱԼ) անդամ է և Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի Եվրասիական խմբի (ԷԱԳ) դիտորդ: ԳՐԵԿՈ-ի գնահատականի համաձայն⁴⁵, Հայաստանում ՓԼ/ԱՖ համակարգն ընդհանուր առմամբ ամբողջականացված է և համապատասխանում է միջազգայնորեն ընդունված չափանիշներին, մասնավորապես հստակ ձևակերպված են պարտավորությունների և հաշվետվողականության շրջանակները, լայն է տեղեկություններ տրամադրելու պարտավորությունը կրող կազմակերպությունների շրջանակը, գործում է ֆինանսական հետաքննության մարմինը և այլն:
35. **Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության ոլորտում.** Օրենսդրորեն հստակեցվել են ՀՀ-ում արժույթային հարաբերությունների կարգավորումը և այդ հարաբերությունների օրինականության նկատմամբ վերահսկողությունը: 2004թ. նոյեմբերին ընդունված «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքը⁴⁶, մասնավորապես, սահմանում է ՀՀ-ում արժույթային գործարքների կնքման կարգն ու պայմանները, արժույթային արժեքների տնօրինման, տիրապետման և օգտագործման դեպքերը, կարգն ու պայմանները, արժույթային արժեքներ համարվող գույքի տեսակները, ՀՀ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների շրջանակը, ռեզիդենտության որոշման կարգը և այլն: Օրենքն ամրագրեց, որ ՀՀ տարածքում ապրանքների, գույքի իրացման, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման փողային գնանշումները, ինչպես նաև դրանցով վճարումներն իրականացվում են ՀՀ դրամով, ինչը նշանակալիորեն ամրապնդեց հայկական դրամի դերն ու նշանակությունը: Օրենքի վիճահարույց դրույթների վերաբերյալ հրապարակվել են պաշտոնական պարզաբանումներ ՀՀ

⁴¹ ՀՀ Քրեական օրենսգիրքը, ՀՕ-528-Ն, ընդունվել է 2003թ. ապրիլի 18-ին (ուժի մեջ է 2003թ. օգոստոսի 1-ից):

⁴² «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» թիվ ՀՕ-13-Ն ՀՀ օրենքն ընդունվել է 2004թ. դեկտեմբերի 14-ին (ուժի մեջ է 2005թ. մարտի 22-ից):

⁴³ Ինստիտուցիոնալ իրավիճակի գնահատումը կապիտալի ազատ տեղաշարժի բնագավառում: Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի (AEPLAC), հոկտեմբեր 2007թ., Երևան, էջ 35:

⁴⁴ «ՀՀ Կենտրոնական բանկի Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ ԿԲ խորհրդի 2005թ. մարտի 3-ի թիվ 97 որոշումը (ուժի մեջ է 2005թ. մարտի 12-ից):

⁴⁵ Evaluation Report on Armenia: Joint First and Second Evaluation Round. Adopted by GRECO at its 27th Plenary Meeting. Strasbourg, 6-10 March 2006., էջ 22:

⁴⁶ «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» թիվ ՀՕ-135-Ն ՀՀ օրենքն ընդունվել է 2004թ. նոյեմբերի 24-ին (ուժի մեջ է 2005թ. հունիսի 28-ից):

ԿԲ⁴⁷ և ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության⁴⁸ կողմից: Մասնավորապես, հստակեցվեց փողային գնանշումները ՀՀ դրամով կատարելու, ՀՀ-ում աշխատավարձերի ՀՀ դրամով վճարման, ՀՀ-ում ոչ-ռեզիդենտների միջև գույքի գործարքներում արտարժույթով վճարումների, գյուղատնտեսական, սպառողական և այլ փոխառությունների արտարժույթով տրամադրման և այլ հարցեր: Օրենքի ընդունմանը զուգահեռ, փոփոխություններ և լրացումներ կատարվեցին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում, որոնցով պատասխանատվություն սահմանվեց արժույթային հարաբերությունները կարգավորող օրենքների և իրավական այլ ակտերի խախտումների համար⁴⁹:

36. **Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգման գործում.** Օրենսդրորեն կարգավորվել է վճարահաշվարկային (ՎՀ) ծառայություն մատուցողների, մասնավորապես, առևտրային բանկերի, վարկային կազմակերպությունների և վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեությունը, ապահովվել է դրամական հոսքերի թափանցիկությունն ու վերահսկելությունը, կրճատվել է տնտեսության մեջ կանխիկի շրջանառության տեսակարար կշիռը: Այսպես, 2004թ. նոյեմբերին ընդունվեց նաև «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը⁵⁰, որը սահմանեց ՀՀ-ում ՎՀ ծառայություններ մատուցելու իրավասություն ունեցող կազմակերպությունների շրջանակը՝ ներառելով, մասնավորապես, առևտրային բանկերը, վարկային կազմակերպությունները և ՎՀ կազմակերպությունները, դրանց լիցենզավորումը, գործունեության իրականացման կարգն ու պայմանները, այն ՎՀ համակարգերը, որոնց գործունեության համար թույլտվություն չի պահանջվում, ինչպես նաև ՎՀ համակարգերի և կազմակերպությունների նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցները: Օրենքով սահմանվեցին համակարգային, ինչպես նաև տնտեսության համար կարևոր նշանակություն ունեցող ՀՀ ՎՀ համակարգերը այլ համակարգերից տարանջատող, ինչպես նաև հանրահայտ և ռիսկեր չպարունակող արտասահմանյան համակարգերը այլ արտասահմանյան համակարգերից տարանջատող չափանիշները: Համակարգային ռիսկերը կրճատելու նպատակով, օրենքը սահմանել է դրույթներ, որոնք ապահովում են ՎՀ համակարգերում վերջնահաշվարկի իրականացումը այն իրավիճակներում, երբ համակարգի մասնակիցների նկատմամբ ընդունվում են վերջիններիս գործունեության կասեցման որոշումներ: ՀՀ ԿԲ կողմից մշակված շուրջ 15 նորմատիվ իրավական ակտերը կարգավորում են ՎՀ կազմակերպությունների համար պարտադիր լիցենզավորման ընթացակարգերը, ինչպես նաև հայաստանյան ՎՀ համակարգերի ստեղծմանը, արտասահմանյան ՎՀ համակարգերին դրանց մասնակցությանը: ՀՀ ԿԲ-ն մշակել է նաև «ՀՀ ԿԲ կողմից վճարային համակարգի նկատմամբ հսկողության իրականացման հայեցակարգ», որի նպատակն է հստակեցնել վճարային համակարգերի հսկողության բնագավառում ՀՀ ԿԲ նպատակները, շրջանակները, իրականացվող քաղաքականությունը և գործընթացը, ինչպես նաև այլ իրավասու մարմինների հետ համագործակցության և հանրությանը տեղեկացման շրջանակները:
37. Հատկանշական է որ, ՎՀ ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությունը հիմնականում համապատասխանեցվել է ԵՄ օրենսդրության պահանջներին, իսկ այս ոլորտում գործող վարչական կառույցները կայացել են թե՛ ինստիտուցիոնալ, թե՛ մարդկային կարողություններով⁵¹:
38. 2003-2008թթ. ժամանակաշրջանում ՀՀ ԿԲ խորհուրդը հրապարակել է քսաներկու պաշտոնական պարզաբանումներ⁵² ԿԲ նորմատիվ ակտերի վերաբերյալ, ապահովելով դրանց հրապարակայնությունը, թափանցիկությունը, միատեսակ մեկնաբանությանը, նպաստելով հարաբերությունների հստակեցմանը ԿԲ կողմից կարգավորվող ոլորտում, հնարավոր տարածայնությունների կրճատմանը, ինչպես նաև ԿԲ-ի աշխատակիցների պաշտոնական դիրքի հնարավոր չարաշահումների սահմանափակմանը:
39. **Վարկային ռիսկի գնահատման մեթոդիկայի և չափանիշների սահմանման գործում.** Օրենսդրորեն հստակեցվել են ՀՀ ԿԲ վերահսկողների կողմից ՀՀ տարածքում գործող բանկերում ստուգումների անցկացման ընթացքում ծագող հարաբերությունները, և էապես կրճատվել են այդ հարաբերություններով պայմանավորված ՀՀ ԿԲ վերահսկողների կողմից պաշտոնական դիրքի

⁴⁷ «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5(1 պրիմ) և 8(1 պրիմ) մասերի մասին» ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 2007թ. փետրվարի 7-ի թիվ 1 պաշտոնական պարզաբանում (ուժի մեջ է 2007թ. մարտի 11-ից):

⁴⁸ «ՀՀ-ում արժույթային արժեքներով գործարքների իրականացման վերաբերյալ» ՀՀ Կառավարությանն առընթեր Հարկային պետական ծառայության պետի 2005թ. հոկտեմբերի 11-ի թիվ 3 պաշտոնական պարզաբանում (ուժի մեջ է 2005թ. նոյեմբերի 11-ից):

⁴⁹ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՅՕ-136-Ն ՀՀ օրենքն ընդունվել է 2004թ. նոյեմբերի 24-ին (ուժի մեջ է 2005թ. հունիսի 28-ից):

⁵⁰ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» թիվ ՅՕ-150-Ն ՀՀ օրենքն ընդունվել է 2004թ. նոյեմբերի 24-ին (ուժի մեջ է 2005թ. հունիսի 28-ից):

⁵¹ Ինստիտուցիոնալ իրավիճակի գնահատումը կապիտալի ազատ տեղաշարժի բնագավառում: Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի (AEPLAC), հոկտեմբեր 2007թ., երևան, էջ 5:

⁵² «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» թիվ ՅՕ-69 ՀՀ օրենք, Հոդված 20:

չարաշահման ռիսկերը: Այսպես, ՀՀ ԿԲ նախագահի որոշմամբ⁵³, ՀՀ ԿԲ բանկային վերահսկողության վարչության աշխատակիցները պարտավոր են ակտիվները սուբյեկտիվ՝ փոխառուի ֆինանսական վիճակի վատթարացման չափանիշներով, դասակարգել համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգով սահմանված ակտիվների դասակարգման սուբյեկտիվ՝ փոխառուի ֆինանսական վիճակի վատթարացման չափանիշների կիրառման վերաբերյալ» ուղեցույցի: Ուղեցույցը, մասնավորապես սահմանում է առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ակտիվների գնահատման ընթացքում ՀՀ ԿԲ վերահսկողների սուբյեկտիվ որոշումների առավելագույն օբյեկտիվ չափանիշները: Ընդ որում, ուղեցույցը վերահսկողին պարտավորեցնում է հիմնավորել սահմանված սկզբունքներից շեղումները և սահմանում նման դեպքերի նկարագրությունը կազմելու ընթացակարգ, ինչը բարձրացնում է վերահսկողների գործունեության թափանցիկությունը և կանոնակարգում նրանց վարքագիծը:

40. **Հարկային ոլորտ:** Հարկերի հաշվարկման և վճարման մեխանիզմների պարզեցման, հարկ վճարողների իրավունքների և պարտականությունների հստակեցման, առկա հակասությունների վերացման, հարկային օրենսդրության կայունության ապահովման, ինչպես նաև հարկային վարչարարության կատարելագործման նպատակով 2003թ. մայիսին ՀՀ կառավարությունը նախաձեռնել է ՀՀ Հարկային օրենսգրքի մշակումը⁵⁴: 2007թ. դեկտեմբերին ՀՀ կառավարությունը հաստատել և ՀՀ ԱԺ է ներկայացրել⁵⁵ օրենսգրքի նաժազիծը՝ դրա ընդհանուր մասը: Օրենսգրքի նախագիծը ստացել է զլխադասային՝ ՀՀ ԱԺ Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունը: ՀՀ ԱԺ-ն նախատեսում է նախագիծն ընդգրկել օրակարգում 2008թ. մայիսին⁵⁶: «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածն⁵⁷ ամրագրել է, որ ՀՀ հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված դրույթներում հակասությունների, երկիմաստությունների կամ տարրնթերցումների առկայության դեպքում հարկման նպատակով այդ դրույթները մեկնաբանվում և կիրառվում են հարկ վճարողի օգտին⁵⁸: ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «ՀՀ-ում հարկային վարչարարության յոթ հիմնական նպատակները» և «ՀՀ-ում հարկային վարչարարության քաղաքականությունները՝ ըստ յոթ հիմնական նպատակների» ռազմավարությունը:
41. Օրենսդրորեն հստակեցվել և կատարելագործվել են հարկատուների իրավունքների պաշտպանության վարչական և դատական մեխանիզմները: Այսպես, 2003թ. դեկտեմբերին «Հարկերի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններն ու լրացումները⁵⁹ սահմանել են, որ ՀՀ հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված դրույթներում հակասությունների, երկիմաստությունների կամ տարրնթերցման դեպքում դրա վերաբերյալ պաշտոնական պարզաբանում ստանալու նպատակով հարկ վճարողը սահմանված կարգով կարող է դիմել հարկային մարմին, ընդ որում՝ տրվող պաշտոնական պարզաբանումների հրապարակվում են «ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի» պաշտոնական տեղեկագրում⁶⁰: Միաժամանակ, 2003թ. նոյեմբերին «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները⁶¹ սահմանել են հարկային ծառայողների գործողությունների կամ անգործության բողոքարկման ընթացակարգերը, գանգատարկման հանձնաժողովի կազմը, դիմում-գանգատի քննարկման կարգը և ժամկետները: Մասնավորապես, նախատեսվել է, որ գանգատարկման հանձնաժողովի նիստին կարող են մասնակցել դիմում-գանգատ ներկայացրած անձը կամ նրա լիազորված անձը, դիմում-գանգատի վերաբերյալ

⁵³ «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգով սահմանված ակտիվների դասակարգման սուբյեկտիվ՝ փոխառուի ֆինանսական վիճակի վատթարացման չափանիշների կիրառման վերաբերյալ» ՀՀ ԿԲ նախագահի 2004 թ. հունիսի 8-ի թիվ 1/267/Ս որոշում:

⁵⁴ «ՀՀ Հարկային օրենսգրքի մշակման համար պատասխանատու աշխատանքային խմբի անհատական կազմը և աշխատանքների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 15-ի թիվ 635-Ն որոշում (ուժի մեջ է 2003թ. հուլիսի 5-ից):

ՀՀ կառավարությունը Հարկային օրենսգրքի նաժազիծը ՀՀ ԱԺ է ուղարկել 2007թ. դեկտեմբերի 29-ին: Կ-203-29.12.2007-ՏՀ-010/0 նախագիծ:

⁵⁵ ՀՀ կառավարությունը Հարկային օրենսգրքի նաժազիծը ՀՀ ԱԺ է ուղարկել 2007թ. դեկտեմբերի 29-ին: Կ-203-29.12.2007-ՏՀ-010/0 նախագիծ:

⁵⁶ 2008թ. մարտի 17-ին ՀՀ ԱԺ որոշել է ՀՀ Հարկային օրենսգրքի նախագիծը ՀՀ ԱԺ նստաշրջանի օրակարգ ընդգրկելը հետաձգել 60 օրով:

⁵⁷ «Հարկերի մասին» թիվ ՀՕ-107 ՀՀ օրենքն ընդունվել է 1997թ. ապրիլի 14-ին (ուժի մեջ է 1997թ. մայիսի 30-ից):

⁵⁸ «ՀՀ Հարկերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-53-Ն ՀՀ օրենքն ընդունվել է 2003թ. դեկտեմբերի 25-ին (ուժի մեջ է 2004թ. հունվարի 25-ից):

⁵⁹ Նույն տեղում:

⁶⁰ «Հարկերի մասին» թիվ ՀՕ-107 ՀՀ օրենք, հոդված 2:

⁶¹ «ՀՀ Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-53-Ն ՀՀ օրենքն ընդունվել է 2003թ. նոյեմբերի 5-ին (ուժի մեջ է 2003թ. դեկտեմբերի 27-ից):

հանձնաժողովի կայացրած որոշումը⁶²: Օրենսդրորեն սահմանված վարքագծի կանոնները⁶³ պարտավորեցրել են հարկային ծառայողներին, իրենց իրավասությունների սահմաններում և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամանակին պատշաճ կարգով անկողնակալորեն քննության առնել հարկատուների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները:

42. **Հարկերից խուսափելու համար պատասխանատվության խստացման գործում.** Օրենսդրորեն խստացվել է հարկային պարտավորությունների կատարումից խուսափելու համար պատասխանատվությունը: Այսպես, ՀՀ Քրեական օրենսգրքում 2006թ. հունիսին կատարված փոփոխությունների և լրացումների⁶⁴ համաձայն, հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելու համար, որը կատարվել է խոշոր չափերով (նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից տասնհինգհազարապատիկը գումարը), առավելագույն պատիժ է սահմանվել ազատազրկումը՝ մինչև երկու տարի ժամկետով, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով: Ընդ որում, առանձնապես խոշոր չափերով (նվազագույն աշխատավարձի տասնհինգհազարապատիկը գերազանցող գումարը) կատարված նույն հանցագործության համար սահմանվել է առավել խիստ պատիժ՝ ազատազրկում երեքից վեց տարի ժամկետով, գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա⁶⁵: 2004, 2005 և 2006թթ. ՀՀ գլխավոր դատախազության վարույթում գտնվել են նման քրեական գործերով հանցագործությունների համապատասխանաբար 57, 24 և 53 դեպք: Հատկանշական է, որ ՀՀ Քրեական օրենսգրքը քրեականացնում է նաև քաղաքացիների կողմից հարկային պարտավորությունները կատարելուց խուսափելը⁶⁶, ինչպես նաև կեղծ ձեռնարկատիրության միջոցով հարկերից խուսափելը⁶⁷, ընդ որում, 2004, 2005 և 2006թթ. ՀՀ գլխավոր դատախազության վարույթում գտնվել են կեղծ ձեռնարկատիրական գործունեության հանցակազմով համապատասխանաբար 14, 28 և 17 քրեական գործեր:
43. Հարկային օրենսդրությունը կանխատեսված և չարամտորեն խախտողների նկատմամբ պատասխանատվության միջոցները խստացնելու նպատակով, ՀՀ հարկային համակարգի զարգացման 2007-2009թթ. եռամյա ծրագիրը⁶⁸ 2008թ. հունիսից նախատեսում է վերանայել նման խախտումների վաղեմության ժամկետը և համապատասխանեցնել դրանք միջազգային լավագույն փորձին, ընդլայնել պատասխանատվության շրջանակները՝ պատասխանատվություն սահմանելով չհաշվարկված հարկի ընդհանուր գումարի չափով, ներդնել հարկման տեսանկյունից սուբսիդար պատասխանատվության օրենսդրական դրույթները, բարձրացնել ՀՀ պետական բյուջեի հանդեպ պարտքեր կուտակած և չվճարած հարկատուների պատասխանատվությունը, և վերանայել թաքցված աշխատողների համար գործող պատասխանատվության դրույթները: Հատկանշական է նաև, որ հարկային պարտավորությունների կատարումից խուսափելու և հարկային խարդախությունների դեմ պայքարին ուղղված օրենսդրության վարչական և քրեական գործող նորմերը եՄ չափանիշների գնահատման համակարգում համարվում են ՀՀ-ում հարկային ոլորտի համեմատաբար կայացած հատվածը⁶⁹:
44. **ՀՊԾ ներքին վերահսկողության ուժեղացման բնագավառում.** 2003-2007թթ. ՀՊԾ վերահսկողության վարչությունը պարբերաբար ամփոփել է հարկային համակարգում իրականացվող ծառայողական քննությունների արդյունքները և ՀՊԾ ներքին վերահսկողությանն առնչվող ցուցանիշները, որոնք հրապարակվում են ամփոփ տեսքով: Այսպես, 2003-2007թթ. տարածքային հարկային մարմինների հարկային ծառայողների պաշտոնական դիրքի չարաշահումների բացահայտման նպատակով իրականացվել է 229 ծառայողական քննություն, որոնց ընթացքում եզրակացությունների հիման վրա պատասխանատվության է ենթարկել 631 հարկային ծառայող, այդ թվում՝ 15-ն ազատվել են աշխատանքից: ՀՊԾ հրամաններով պարտադիր քննարկման առկա են դառնում հարկային ծառայողների՝ դատարանի կողմից հաստատված անգործության փաստերը, ինչպես նաև ի վնաս հարկային մարմնին կայացված դատական ակտերը: ՀՊԾ-ն իր աշխատանքների թափանցիկության և հրապարակայնության ապահովման նպատակով 2005թ.-ից հրապարակում է նաև տարեկան արդյունքներով հարկային վնասներ հայտարարագրած և ապառքներ կուտակած հարկ վճարողների ցանկերը:

⁶² «Հարկային ծառայության մասին» թիվ 30-407 ՀՀ օրենքն ընդունվել է 2002թ. հուլիսի 3-ին (ուժի մեջ է 2002թ. նոյեմբերի 12-ից), Հոդված 43¹:

⁶³ «Հարկային ծառայողի վարքագծի կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2002թ. հոկտեմբերի 10-ի թիվ 1624-Ն որոշում (ուժի մեջ է 2002թ. նոյեմբերի 12-ից):

⁶⁴ «ՀՀ Քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 30-145-Ն ՀՀ օրենքն ընդունվել է 2006թ. հունիսի 15-ին (ուժի մեջ է 2006թ. հուլիսի 22-ից):

⁶⁵ ՀՀ Քրեական օրենսգրք, Հոդված 205:

⁶⁶ ՀՀ Քրեական օրենսգրք, Հոդված 206:

⁶⁷ ՀՀ Քրեական օրենսգրք, Հոդված 189:

⁶⁸ «ՀՀ հարկային համակարգի զարգացման 2007-2009թթ. եռամյա ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2007թ. մայիսի 24-ի թիվ 696-Ն որոշում (ուժի մեջ է 2007թ. հուլիսի 5-ից):

⁶⁹ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՊԾ վարչական կարողությունների գնահատում (ըստ եվրահանձնաժողովի հավանության արժանացրած ցուցանիշների համակարգի): Հաշվետվության համառոտ ակնարկ: Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոն (AEPLAC), փետրվար 2008թ., Երևան, էջ 3:

Միաժամանակ, հարկատուների և հարկային համակարգի աշխատակիցների միջավայրում հաղորդակցության կազմակերպման առումով ՀՀ հարկային մարմինը շուրջ 2.4 անգամ ետ է մնում եվրոպական նվազագույն չափանիշից: Ավելին, ՀՀ հարկային ոլորտում առավել խոցելի է գնահատվել հենց մարդկային գործոնը. եվրոպական չափանիշների համեմատ ՀԴԾ-ն հատկապես ետ է մնում էթիկայի, աշխատակիցների գործունեությունը խթանող, նրանց աջակցող և պաշտպանող մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության և գործող պրակտիկայի, ինչպես նաև արդյունավետ ներքին հաղորդակցության համակարգի առումով: Եվրոպական չափանիշների համեմատ թերություն է մնում նաև ՀՀ հարկային մարմնի ստորաբաժանումների և աշխատակիցների կատարողականության գնահատման և աշխատանքի արդյունավետության կառավարման համակարգը, այդ թվում՝ հարկային մարմնում ներքին աուդիտի մեխանիզմը⁷⁰:

45. **Աուդիտի համակարգի ինստիտուցիոնալ կայացման բնագավառում.** Օրենսդրորեն ամրագրվել են աուդիտորական գործունեության իրականացման հիմունքները և կանոնակարգվել են աուդիտորական գործունեության հետ կապված հարաբերությունները: Մասնավորապես, 2002թ. դեկտեմբերին ընդունված «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքը⁷¹ սահմանել է աուդիտորական գործունեությունը, աուդիտի ստանդարտների և ընթացակարգերի սկզբունքները, աուդիտ իրականացնող անձանց գործունեության սահմանափակումները, ինչպես նաև աուդիտի եզրակացությունը և հաշվետվությունը: Օրենքը հստակեցրել է աուդիտ իրականացնող և աուդիտի ենթարկվող անձանց իրավունքներն ու պարտականությունները: Օրենսդրորեն սահմանվել են նաև աուդիտի որակավորման հիմնական դրույթները, աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզավորումը և օրենքի պահանջների խախտման համար պատասխանատվությունը: Աուդիտորական գործունեություն իրականացնող ինստիտուտների կայացմանը և խթանի աուդիտի, հաշվապահական հաշվառման եւ ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների համարժեք կիրառմանը նշանակալիորեն նպաստել են 2005թ. ընթացքում աուդիտորների որակավորման քննությունների անցկացման կարգավորումը⁷², աուդիտորների վարքագծի կանոնների ներդրումը⁷³ և միջազգային ստանդարտների համապատասխանող աուդիտի ստանդարտների ընդունումը⁷⁴:
46. Հատկանշական է, որ աուդիտորական գործունեություն իրականացնող անձանց որակավորման կարևորագույն օրենսդրական գործառույթներ են տրվել աուդիտորների և հաշվապահների անդամակցությամբ ստեղծված հասարակական կազմակերպությանը՝ մասնագիտացված կառույցին: Թեև մասնագիտացված կառույցի հավատարմության մեխանիզմը դեռևս ներդրված չէ, սակայն ստեղծվել և արդյունավետ կերպով գործում է հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության զարգացմանը հետամուտ Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիան (ՀՀԱԱ), որն աջակցում է Հաշվապահների միջազգային դաշնության և Հաշվապահական միջազգային ստանդարտների խորհրդի որոշումների իրականացմանը և նպաստում է աուդիտորների վարքագծի ստանդարտների, ՀՀ-ում Հաշվապահական միջազգային ստանդարտների և Աուդիտի միջազգային ստանդարտների կիրառմանը:
47. **Լիցենզավորման ենթակա գործունեության կրճատման բնագավառում.** Օրենսդրորեն հստակեցվել են լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները: Մասնավորապես, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում⁷⁵ 2003թ. հունվարից փոփոխություններ և լրացումներ են կատարվել մի շարք ոլորտներում և բնագավառներում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկում: Ընդհանուր առմամբ, 2003-2008թթ. լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները քանակապես ավելացել և որակապես հստակեցվել են, ընդ որում գործունեության ներդրված տեսակների մեծամասնությունը պահանջում է լիցենզավորում բարդ ընթացակարգով:
48. **Մրցակցային հավասար հնարավորությունների ապահովման բնագավառում.** Օրենսդրորեն հստակեցվել են տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառի մի շարք կարևորագույն խնդիրներ և դրանց կարգավորման իրավական լծակները: Օրենսդրորեն կարգավորվել է նաև պետական օժանդակությունն ու դրա արգելումը, սահմանվել է տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումների համար տնտեսվարող

⁷⁰ Ինստիտուցիոնալ իրավիճակի գնահատումը կապիտալի ազատ տեղաշարժի բնագավառում: Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի (AEPLAC), հոկտեմբեր 2007թ., Երևան, էջ 2-4:

⁷¹ «Աուդիտորական գործունեության մասին» թիվ ՀՕ-512-Ն ՀՀ օրենքն ընդունվել է 2002թ. դեկտեմբերի 26-ին (ուժի մեջ է 2003թ. մարտի 12-ից):

⁷² «Աուդիտորների որակավորման քննությունների անցկացման կարգը և քննությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի թիվ 123-Ն որոշում (ուժի մեջ է 2005թ. մարտի 14-ից):

⁷³ «Աուդիտորի վարքագծի կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005թ. ապրիլի 21-ի թիվ 499-Ն որոշում (ուժի մեջ է 2005թ. մայիսի 28-ից):

⁷⁴ «Աուդիտի ստանդարտները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005թ. ապրիլի 21-ի թիվ 509-Ն որոշում (ուժի մեջ է 2005թ. հունիսի 4-ից):

⁷⁵ «Լիցենզավորման մասին» թիվ ՀՕ-193 ՀՀ օրենքն ընդունվել է 2001թ. մայիսի 30-ին (ուժի մեջ է 2001թ. օգոստոսի 8-ից):

սուբյեկտների և պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց անհատական պատասխանատվությունը⁷⁶: Չգալիորեն խստացվել է պատասխանատվությունը տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների համար, մասնավորապես, բազմակի անգամ ավելացել են այս բնագավառում տարբեր իրավախախտումների համար նախատեսվող տուգանքների չափերը՝ դրանք հիմնականում փոխկապակցելով տնտեսվարողի նախորդ օրացուցային տարվա իրացման ծավալի (հասույթի) հետ: Միաժամանակ, վերացվել է տնտեսվարողի կողմից օրենսդրության խախտմամբ ստացված շահույթը ՀՀ պետական բյուջե փոխանցելու դրույթը⁷⁷: Պատասխանատվություն է սահմանվել նաև տնտեսվարողների կողմից ՏՄՊՊՀ որոշումները սահմանված ժամկետում չկատարելու համար⁷⁸: Հստակեցվել և խստացվել են տնտեսվարողների կողմից նրանց առնչվող հարցերի քննարկման, վարույթի, հետազոտության, ստուգման, ուսումնասիրության կամ մոնիտորինգի համար անհրաժեշտ տեղեկատվության ներկայացման պարտավորությունները և դրանց կատարման կարգը, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների ծանուցման կարգը⁷⁹: Մասնավորապես, սահմանվել է, որ սահմանված ժամկետում անհրաժեշտ տեղեկատվություն չտրամադրող տնտեսվարողներին առընչվող որոշումները կարող են կայացվել առկա փաստաթղթերի և տեղեկատվության հիման վրա:

49. Օրենսդրորեն հստակեցվել են նաև տնտեսական մրցակցության բնագավառում պետական քաղաքականությունն իրականացնող մարմնի՝ ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (ՏՄՊՊՀ), իրավասություններն ու գործառույթները: Այսպես, ՀՀ Նախագահի կողմից նշանակվող յոթ անդամից բաղկացած ՏՄՊՊՀ-ին տրվել են օրենսդրական լիազորություններ որոշումներ ընդունելու ոչ միայն տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության փաստացի, այլև հնարավոր խախտումների վերաբերյալ: Ավելին, ՏՄՊՊՀ-ին տրվել են վարչական վարույթ հարուցելու և դրա շրջանակներում, ինչպես նաև տնտեսվարողների կողմից ներկայացված տեղեկությունների արժանահավատության, նրանց փաստացի գործունեության բացահայտման կամ ՏՄՊՊՀ որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության նպատակով, հետազոտություն, ուսումնասիրություն, մոնիտորինգ, ինչպես նաև ստուգում իրականացնելու կարևորագույն լիազորություններ, ընդ որում, ելնելով գործառույթների առանձնահատկություններից, ՏՄՊՊՀ կողմից իրականացվող վարչական վարույթների առավելագույն ժամկետը սահմանվել է 90 օր⁸⁰: Հատկանշական է, որ օրենսդրական փոփոխությունների համաձայն, ՏՄՊՊՀ կողմից հակամրցակցային համաձայնությունները համարվում են ապացուցված եթե առկա են փաստացի ապացույցներ (գրավոր փաստաթուղթ) կամ եթե ՏՄՊՊՀ ուսումնասիրությունները վկայում են հիշյալ համաձայնությունների առկայության մասին: ՏՄՊՊՀ-ին տրվել է նաև պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց՝ տնտեսական մրցակցության օրենսդրությանը հակասող գործողությունները դադարեցնելու միջնորդությամբ ՀՀ կառավարությանը դիմելու լիազորություն: Օրենսդրորեն սահմանվել է ՏՄՊՊՀ անդամների եկամուտների հայտարարագրման պահանջը⁸¹: ՏՄՊՊՀ-ն 2003-2007թթ. ՀՀ ԱԺ-ում հրապարակել է իր գործունեության տարեկան ծրագրերը և հաշվետվությունները⁸², որոնք մասնավորապես, ներառել են ապրանքային շուկաների վերլուծությունը և տնտեսական մրցակցության կարգավորման և վերահսկման ուղղությամբ իրականացված միջոցառումները: ՏՄՊՊՀ գործունեության թափանցիկությունը, մասնավորապես ապահովվում է պաշտոնական կայքի միջոցով⁸³, ինչպես նաև պարբերաբար իրապարակվող պաշտոնական տեղեկագրերի և կանոնավոր իրավիքի մամուլի ասուլիսիների միջոցով: Ընդհանուր առմամբ, տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառի կարգավորման համակարգը ՀՀ-ում դեռևս կայացման փուլում է⁸⁴:

50. **Հանրային ֆինանսների կառավարում.** Պետական ֆինանսների կառավարման ոլորտում Հայաստանը շարունակաբար բարելավել է գործընթացներն ու ընթացակարգերը: Այսպես, կրճատվել է պետական բյուջեի դեֆիցիտ/ՅՆԱ հարաբերակցությունը, էականորեն աճել են պետական բյուջեի մուտքերը, ապահովվելով ծախսերի աճի համեմատ առաջանցիկ տեմպեր: 2003-2007թթ. բյուջետային գործընթացը շարունակաբար հիմնվել է ՀՀ Ադրբայջանի հաղթահարման

⁷⁶ Նույն տեղում:

⁷⁷ Նույն տեղում:

⁷⁸ Նույն տեղում:

⁷⁹ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 30-29-Ն ՀՀ օրենքն ընդունվել է 2003թ. դեկտեմբերի 25-ին (ուժի մեջ է 2004թ. փետրվարի 14-ից):

⁸⁰ Նույն տեղում:

⁸¹ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 30-91-Ն ՀՀ օրենքն ընդունվել է 2005թ. մայիսի 4-ին (ուժի մեջ է 2005թ. հունիսի 18-ից):

⁸² ՏՄՊՊՀ գործունեության տարեկան ծրագրերն ու հաշվետվությունները տեղադրված են նաև ՏՄՊՊՀ պաշտոնական կայքում՝ <http://www.competition.am> հասցեով:

⁸³ գործում է <http://www.competition.am> հասցեով

⁸⁴ Ինստիտուցիոնալ իրավիճակի գնահատումը մրցակցության և պետական աջակցության բնագավառում: Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի (AEPLAC), հուլիս 2007թ., Երևան, էջ 4-5:

ռազմավարական ծրագրով (ԱՅԴԾ)⁸⁵ սահմանված զարգացման գերակայությունների և հեռահար նպատակների վրա, մասնավորապես, պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերը⁸⁶: Նույն ժամանակահատվածում օրենսդրորեն հստակեցվել է բյուջետային գործընթացում հարաբերությունների կարգավորումը: Բարելավվել է նաև ՀՀ պետական բյուջեի թափանցիկությունը՝ հիմնական բյուջետային փաստաթղթերը և բյուջեի կատարման հաշվետվությունները հրապարակվում և հասարակությանը մատչելի են դառնում խելամիտ ժամկետներում: 2004թ.-ից պետական գանձապետական համակարգն ամփոփում և հրապարակում է⁸⁷ ՀՀ համայնքների բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը, ինչը հնարավորություն է ընձեռում բարելավել համայնքների բյուջեներին հատկացվող դոտացիաների, սուբսիդիաների և սուբվենցիաների արդյունավետ իրականացման վերահսկողությունը: ՀՀ տարածքային կառավարման համակարգի պաշտոնական ինտերնետային կայքում⁸⁸ հրապարակվել են ՀՀ առանձին համայնքների 2004-2005թթ. բյուջեների և դրանց կատարման վերաբերյալ ամբողջական, ինչպես նաև որոշ մարզերի համայնքների 2006-2007թթ. բյուջեների և դրանց կատարման վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը: 2008թ.-ին, առաջին անգամ, ՀՀ պետական բյուջեն ձևավորվել է GFS2001-ի հիման վրա, որի շնորհիվ կբարելավվի պետական բյուջեի ընկալելիությունը, թափանցիկությունը և վերահսկելիությունը:

51. 2005թ.-ից ներդրվել են հաշվապահական հաշվառման ստանդարտները⁸⁹, որոնք գործում են թե՛ հանրային, թե՛ մասնավոր հատվածներում: 2007թ. դեկտեմբերին սկսվել է Հանրային ոլորտի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների ներդրման գործընթացը: Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի և գանձապետական համակարգի երկրորդ սերնդի բարեփոխումների ծրագրի շրջանակներում մշակվել և ներդրվել են հաշվային պլանը և հաշվապահական հրահանգները, իրականացվում են հանրային հատվածի ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգի ներդրման աշխատանքները⁹⁰: Օրենսդրորեն հստակեցվել է մասնագիտական պատասխանատվությունը հաշվապահական հաշվառման վարման համար: Այսպես, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքում⁹¹ 2004թ. կատարվել են փոփոխություններ և լրացումներ⁹², որոնց համաձայն կազմակերպության գլխավոր հաշվապահի առկայությունը պարտադիր պահանջ է՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կազմակերպության ղեկավարը համատեղում է նաև գլխավոր հաշվապահի պարտականությունները:
52. Հանրային հատվածում ներքին աուդիտի համակարգի զարգացման ռազմավարության շրջանակներում⁹³, 2003-2008թթ. ներդրվել և զարգացել է ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում ներքին աուդիտի ապակենտրոնացված համակարգը: Այսպես, աուդիտի ենթակա յուրաքանչյուր հանրային օբյեկտում նվազագույնը երեք տարին մեկ աուդիտ է անցկացվում, որի արդյունքները ներկայացվում են համապատասխան

⁸⁵ «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003թ. օգոստոսի 8-ի թիվ 994-Ն որոշում (ուժի մեջ է 2003թ. սեպտեմբերի 27-ից):

⁸⁶ «ՀՀ 2004-2006թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003թ. օգոստոսի 14-ի թիվ 1030-Ն որոշում (ուժի մեջ է 2003թ. սեպտեմբերի 18-ից):

«ՀՀ 2005-2007թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2004թ. հունիսի 17-ի թիվ 985-Ն որոշում (ուժի մեջ է 2004թ. հուլիսի 27-ից):

«ՀՀ 2006-2008թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 1-ի թիվ 777-Ն որոշում (ուժի մեջ է 2005թ. հուլիսի 12-ից):

«ՀՀ 2007-2009թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006թ. հունիսի 8-ի թիվ 774-Ն որոշում (ուժի մեջ է 2006թ. հուլիսի 1-ից):

«ՀՀ 2008-2010թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2007թ. հունիսի 21-ի թիվ 738-Ն որոշում (ուժի մեջ է 2007թ. հուլիսի 17-ից):

⁸⁷ 2004-2007թթ. ՀՀ համայնքների բյուջեների կատարման ամփոփ եռամսյակային հաշվետվությունները հրապարակված են <http://www.mfe.am/mfeamweb/petgandzham/hamajngibujge.htm> հասցեում: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը (ԱՎԾ) հրապարակում է պետական ֆինանսների վիճակագրությունը տեղեկատվական բազան, որը ձևավորվում է ՀՀՖԵՆ կողմից ԱՎԾ-ին տրամադրած պետական և համայնքային բյուջեների կատարման մասին, ինչպես նաև ՀՀ սոցիալական ապահովագրության հիմնադրամի կողմից՝ ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեի կատարման հաշվետվությունների հիման վրա: http://www.armstat.am/Arm/Publications/2007/Finansner_07/Finansner_07_1.pdf:

⁸⁸ ՀՀ տարածքային կառավարման համակարգի պաշտոնական ինտերնետային կայք: <http://www.region.am>:

⁸⁹ «ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 9-ի թիվ 2159-Ն որոշում (ուժի մեջ է 2006թ. հունվարի 30-ից):

⁹⁰ «ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի և գանձապետական համակարգի երկրորդ սերնդի բարեփոխումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003թ. ապրիլի 10-ի թիվ 393-Ն որոշում (ուժի մեջ է 2003թ. մայիսի 8-ից):

⁹¹ «Հաշվապահական հաշվառման մասին» թիվ ՀՕ-515-Ն ՀՀ օրենքն ընդունվել է 2002թ. դեկտեմբերի 26-ին (ուժի մեջ է 2003թ. փետրվարի 22-ից):

⁹² «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-190-Ն ՀՀ օրենքն ընդունվել է 2004թ. դեկտեմբերի 14-ին (ուժի մեջ է 2005թ. հունվարի 1-ից):

⁹³ «ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց ենթակա հիմնարկների և պետական ու համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ներքին աուդիտի համակարգի զարգացման ռազմավարություն հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2004թ. սեպտեմբերի 17-ի թիվ 1376-Ն որոշում (ուժի մեջ է 2004թ. հոկտեմբերի 28-ից):

մարմնի գլխավոր ֆինանսիստին: Հստակեցվել է հանրային հատվածում աուդիտի ենթակա օբյեկտներում աուդիտի անցկացման կարգը⁹⁴, մասնավորապես ներքին աուդիտի գլխավոր աուդիտորի և աուդիտորական խմբերի գործունեության շրջանակները, աուդիտի տեսակները, պլանավորումը, ծրագրերը, նախապատրաստումն ու ծանուցումը, իրականացման ընթացակարգերն ու աուդիտ հաշվետվությանը ներկայացվող պահանջները⁹⁵: 2008թ. հաստատվել է հանրային ֆինանսների կառավարման համակարգի մասնագետների ուսուցման, շարունակական վերապատրաստման և որակավորման համակարգի ներդրման ռազմավարությունը, որն ուղղված է հանրային հատվածում գլխավոր ֆինանսիստների, հաշվապահների և ներքին աուդիտորների անհրաժեշտ մասնագիտական կարողությունների ապահովմանը: 2008թ. ապրիլին ՀՀ Ազգային ժողովն առաջին ընթերցմամբ ընդունել է ՀՀ կառավարության հեղինակած «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի նախագիծը⁹⁶, որն էապես ընդլայնում է ներքին աուդիտի խնդիրները, բարձրացնում է ներքին աուդիտի վստահելիությունը, ներառում է ռիսկերի գնահատումը և դրանց կառավարման դրույթները, ինչպես նաև մեծացնում է գլխավոր աուդիտորների անկախության աստիճանը և սահմանում միջազգային չափանիշներին համահունչ ներքին աուդիտորների որակավորման պահանջները: ՀՀ ՖԷՆ աշխատակազմում 2005թ. ստեղծվել է Ներքին աուդիտի գնահատման և ֆինանսական վերահսկողության վարչությունը⁹⁷, որը համակարգում է ներքին աուդիտի համակարգի կայացման գործընթացը, գնահատում է ներքին աուդիտի պլանների և հաշվետվությունների որակը և օժանդակում է ներքին աուդիտորների ուսուցմանը:

53. 2005թ. նոյեմբերի ՀՀ սահմանադրության փոփոխությունները էականորեն մեծացրեցին աուդիտի գերագույն մարմնի՝ ՀՀ Վերահսկիչ պալատի անկախության աստիճանը և բարձրացրեցին այս կառույցի դերը՝ որպես երկրի կառավարման համակարգում վերահսկողության և հակակշիռների կարևորագույն մեխանիզմներից մեկը: 2006թ. դեկտեմբերին ընդունված «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքը⁹⁸ օրենսդրորեն ամրագրեց աուդիտի գերագույն մարմնի լիազորությունների շրջանակի և գործառնությունների ընդլայնումը: Յոթ անդամներից կազմված Վերահսկիչ պալատի (ՎՊ) լիազորությունները, մասնավորապես ներառում են պետական բյուջեի և մասնավորեցման ծրագրի կատարման մասին ՀՀ կառավարության և ՀՀ ԿԲ տարեկան հաշվետվությունների վերաբերյալ եզրակացությունների կազմումը և տրամադրումը, բյուջետային ելքերի, պետական պարտքի կառավարման, պետական արտաբյուջետային միջոցների օգտագործման, պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի ելքերի, պետական և համայնքների բյուջեի մուտքերն ապահովող լիազորված մարմինների գործառնությունների կատարման, համայնքների բյուջեի ելքերի, զանձապետական համակարգի կողմից իրագործվող խնդիրների օրինական և արդյունավետ կատարման, պետական ու համայնքային սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացումը, դրա արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների և պարբերականների կազմումն ու հրապարակումը: 2003-2007թթ. ՎՊ-ն անդամակցել է աուդիտի գերագույն կառույցների INTOSAI, EUROSAI և ASOSAI միջազգային հեղինակավոր կազմակերպություններին:

54. **Պետական գնումների բնագավառում:** 2004թ. ՀՀ կառավարությունը գնումների գործընթացի կազմակերպման արդյունավետության, թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության ապահովման ուղղությամբ մի շարք կարևորագույն քայլեր է ձեռնարկել, որոնք այնուհետև ամրագրվել են օրենսդրորեն⁹⁹: Այսպես, օրենսդրորեն հստակեցվել է միջազգային չափանիշներին են համապատասխանեցվել պետական գնումների համակարգն ու գործընթացները և գնումների գործընթացին մասնակից կողմերի հարաբերությունները: 2004թ. դեկտեմբերին ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքը¹⁰⁰, որը համապատասխանում է ՄԱԿ-ի Միջազգային առևտրային օրենքի հանձնաժողովի (UNCITRAL) մոդելի պահանջներին և չափանիշներին, կարգավորում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, պետության կամ համայնքների հիմնարկների, ՀՀ կենտրոնական բանկի, պետական կամ համայնքների ոչ առևտրային և պետության կամ համայնքների հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից ապրանքների, աշխատանքների և

⁹⁴ «ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև վերջիններիս ենթակա հիմնարկներում ներքին աուդիտի անցկացման կարգը» հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002թ. դեկտեմբերի 30-ի թիվ 934-Ն հրաման (ուժի մեջ է 2003թ. փետրվարի 27-ից):

⁹⁵ «ՀՀ ՖԷՆ 2002թ. դեկտեմբերի 30-ի թիվ 934-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2004թ. հունվարի 20-ի թիվ 23-Ն որոշում (ուժի մեջ է 2004թ. փետրվարի 28-ից):

⁹⁶ «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի նախագիծ թիվ. Կ-224-18.02.2008-ՖԿ-010/1, ՀՀ ԱԺ-ն ընդունել է առաջին ընթերցմամբ 2008թ. ապրիլի 10-ին:

⁹⁷ «ՀՀ կառավարության 2002թ. հուլիսի 11-ի թ. 1460-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 24-ի թիվ 333-Ն որոշում (ուժի մեջ է 2005թ. ապրիլի 21-ից):

⁹⁸ «Վերահսկիչ պալատի մասին» թիվ ԶՕ-4-Ն ՀՀ օրենքն ընդունվել է 2006թ. դեկտեմբերի 25-ին (ուժի մեջ է 2007թ. հունիսի 17-ից):

⁹⁹ «Գնումների գործընթացի կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու մասին» ՀՀ կառավարության 2004թ. սեպտեմբերի 24-ի թիվ 1690-Ն որոշում (ուժի մեջ է 2004թ. դեկտեմբերի 28-ից):

¹⁰⁰ «Գնումների մասին» թիվ ԶՕ-160-Ն ՀՀ օրենքն ընդունվել է 2004թ. դեկտեմբերի 6-ին (ուժի մեջ է 2005թ. հունվարի 1-ից):

ծառայությունների ձեռքբերման գործընթացի հետ կապված հարաբերությունները, սահմանում այդ հարաբերությունների կողմերի հիմնական իրավունքները և պարտականությունները: Համապատասխան փոփոխություններ են արվել նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի¹⁰¹ և այլ նորմատիվ իրավական ակտերի գնումների կարգավորմանն առնչվող դրույթներում: Հատկանշական է, որ պետական գնումների բնագավառի օրենսդրական փոփոխությունները հիմք հանդիսացան Առևտրի միջազգային կազմակերպության (WTO) Պետական գնումների համաձայնագրին (GPA) ՀՀ անդամակցության բանակցությունների համար: 2003-2007թթ. ընդունվել են նաև գնումների ընթացակարգերը կանոնակարգող մի շարք ենթօրենսդրական ակտեր, որոնք մասնավորապես հստակեցրել են մեկ աղբյուրից գնումներ կատարելու հիմքերը¹⁰², պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող գնումներին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների որոշման կարգը¹⁰³, պետական եվ ծառայողական գաղտնիք չպարունակող պետական գնումների անվանացանկի կազմման կարգը¹⁰⁴, պարբերաբար հրապարակվել են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկերը¹⁰⁵ և այլն: Հատկանշական է, որ ձեռնարկված միջոցառումների արդյունքում 2006թ. համեմատ 2007թ.-ին կտրուկ նվազել է մեկ աղբյուրից կատարվող ոչ մրցութային գնումների ծավալը` 3.7 մլրդ. դրամի փոխարեն կազմելով 2.1 մլրդ. դրամ: Այդուհանդերձ, մեկ աղբյուրից կատարվող գնումների ծավալը հանրային որոշ հատվածներում, մասնավորապես կրթության, առողջապահության բնագավառներում մնում է մեծ: Մտահոգիչ է այն փաստը, որ մրցութային մասնակցող տնտեսավարողների միջին թիվը 2007թ.-ին կրճատվել է 2006թ. համեմատ, 2.7-ի փոխարեն կազմելով 1.55, ինչը տնտեսավարող սուբյեկտների շարունակական աճի պայմաններում ահազանգում է տնտեսական մրցակցության հետ կապված վտանգման մասին: 2006թ. հունվարին հաստատվել է էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման ռազմավարությունը¹⁰⁶, որն ուղղված է պետական ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացմանն ու բյուջետային գործընթացում կոռուպցիոն ռիսկերի կրճատմանը: Ռազմավարության միջոցառումների իրականացմանն նպատակով 2008թ. պետական բյուջեն հատկացրել է 700 միլիոն դրամ:

55. **ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի Հանձնաժողովի** կողմից հաստատված 59 կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության վարման մեթոդոլոգիայով ՀՀ ոստիկանությունը ամփոփում է իրավապահ մարմինների կողմից տրամադրված տվյալները և փոխանցում ՀՀ վիճակագրության ազգային ծառայությանը:
56. **Պետական ծառայության բարեփոխումների ուղղությամբ`** Հայաստանում ստեղծված է քաղաքացիական և համայնքային ծառայությունները, ինչպես նաև պետական ծառայության առանձին տեսակները: Համապատասխան օրենքները ընդունված են և աշխատանքներ են տարվում դրանց կայացման ուղղությամբ: Ամբողջ պետական և համայնքային ապարատի մասնագիտական կադրային ներուժի ընտրությունը և առաջխաղացումը, աշխատանքից ազատումն ու մասնագիտական աճն ապահովվում է ըստ արժանիքի` մրցութային հիմունքներով: Պետական ծառայողների և համայնքային ծառայողների վարձատրության համակարգը կանոնակարգված է և կախածության մեջ է դրված ըստ զբաղեցրած պաշտոնից, որակավարման մակարդակից ու ստաժից: Վերջին տարիներին պարբերաբար բարձրացվում է պետական ծառայողների աշխատավարձերի նվազագույն շեմը: Պետական և համայնքային ծառայողների համար ստեղծվել են Վերապատրաստման կառույցներ և նորացված ծառայություններ: Հանրային ծառայության միասնականացման, պետական ծառայությանը ներկայացվող միասնական պահանջների սահմանման, ծառայությունների միջև կապերի և կադրերի տեղաշարժը նվազագույնի հասցնելու նպատակով «Հանրային /պետական/ ծառայությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը գտնվում է քննարկման փուլում:
57. **Պետական կառավարման համակարգում, կառավարման մարմինների գործառույթների և չափերի օպտիմալացման ուղղությամբ:** Տարանջատվել են պետական կառավարման մարմինների աշխատակազմերը քաղաքական իշխանության մարմիններից, որը իրական նախադրյալներ է ստեղծում կոռուպցիայի դեմ պայքարում: 2003թ. սկսած կտրուկ նվազել է գործադիր իշխանության մարմինների թիվը, կառավարությանն ենթակա գերատեսչությունների

¹⁰¹ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքը, թիվ ՅՕ-239, ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին (ուժի մեջ է 1999թ. հունվարի 1-ից):

¹⁰² «Մեկ անձից գնումներ կատարելու հիմքերը և (կամ) փաստաթղթերը սահմանելու մասին» ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2005թ. ապրիլի 25-ի թիվ 426-Ն որոշում (ուժի մեջ է 2005թ. մայիսի 26-ից):

¹⁰³ «Պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող գնումներին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր հնարավոր մասնակիցների որոշման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006թ. սեպտեմբերի 8-ի թիվ 2274-Ն որոշում (ուժի մեջ է 2006թ. հունվարի 26-ից):

¹⁰⁴ «ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից պետական եվ ծառայողական գաղտնիք չպարունակող տվյալ տարվա պետական գնումների անվանացանկի կազմման ու ՀՀ ՖԷՆ ներկայացման կարգը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2006թ. հուլիսի 14-ի թիվ 718-Ն որոշում (ուժի մեջ է 2006թ. օգոստոսի 25-ից):

¹⁰⁵ «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2005թ. նոյեմբերի 2-ի թիվ 1166-Ն որոշում (ուժի մեջ է 2005թ. դեկտեմբերի 11-ից):

¹⁰⁶ «Էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 26-ի թիվ 137-Ն որոշում (ուժի մեջ է 2006թ. մարտի 10-ից):

թիվը, միասնականացվել են գործադիր իշխանության մարմինների աշխատակազմերի կառուցվածքները, ձևավորվել են տնտեսության զարգացմանը համահունչ նոր մարմիններ, ինչպիսիք են տեսչություններն ու գործակալություններն, որոնց գործունեությունը միտված է նաև հակակոռուպցիոն պայքարին:

- 58. Պետական պաշտոնյաների էթիկայի կանոնակարգերի սահմանման ուղղությամբ** Չայաստանի Չանրապետությունում, կախված ծառայության առանձնահատկություններից, ընդունվել են քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոններ: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով կարգապահական պատասխանատվություն է նախատեսվում քաղաքացիական ծառայողի էթիկայի կանոնների խախտման համար: ՀՀ դատական օրենսգրքով մանրամասն նկարագրված են դատավորի էթիկայի կանոնները, ինչպես իր աշխատանքային գործունեության ժամանակ, այնպես էլ դրանից դուրս: Բացի այդ, դատավորների համար սահմանված են շահերի բախման սահմանափակումները, ինչպես նաև էթիկայի կանոնների և շահերի բախման խախտումների համար պատասխանատվության միջոցներ: Նույն համակարգը տեղայնացված է նաև դատախազների համար: Այս նոր համակարգը զուգացվել է դատավորների և դատախազների աշխատավարձերի բարձրացմամբ, դատախազական և դատական համակարգի օպտիմալացմամբ: Օրենքով սահմանված էթիկայի կանոնների և շահերի բախման սահմանափակումների նկատմամբ հսկողությունն իրականացնելու են ստեղծված համապատասխան էթիկայի հանձնաժողովները, որոնց լիազորությունների շրջանակները նույնպես հստակ նկարագրված են: «Դատական օրենսգրքի» 74 հոդվածի համաձայն դատարանների նախագահների խորհուրդը ձևավորում է էթիկայի հանձնաժողով: Համաձայն 11-րդ հոդվածի՝ Արդարադատության եւ օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացման կապակցությամբ իր գործունեությանը օրենքով չնախատեսված միջամտության մասին դատավորը պարտավոր է անմիջապես հայտնել Չայաստանի Չանրապետության դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովին: Եթե էթիկայի հանձնաժողովը համարի, որ տեղի է ունեցել օրենքով չնախատեսված միջամտություն դատավորի գործունեությանը, ապա նա պարտավոր է դիմել համապատասխան մարմիններին մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի համաձայն ստեղծվել է ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողով, կազմի մեջ են մտնում գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի 1 տեղակալ, 2 դատախազ եւ Չանրապետության Նախագահի կողմից 3 տարի ժամկետով նշանակվող 4 իրավաբան անդամ: Էթիկայի հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը: ՀՀ նախագահի 31.05.2007թ. Ն-7-135-Ա հրամանագրով նշված հանձնաժողովում նշանակվել են Չայաստանի Չանրապետության սահմանադրական դատարանի անդամը, ՀՀ Նախագահի օգնականը, ՀՀ կառավարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետը և քաղաքացիական ծառայության խորհրդի անդամը: ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգում փորձնական կարգով էթիկայի հանձնաժողովներ և էթիկայի կանոնակարգեր են մշակվել ՀՀ առողջապահության, ՀՀ կրթության և գիտության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատակիցների համար: ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի որոշմամբ սահմանվել են այդ հանձնաժողովների կազմը և կանոնակարգերը: ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովի և քաղաքացիական ծառայության խորհրդի համատեղ որոշմամբ նախատեսվում է այս կուտակված փորձը տարածելու պետական կառավարման բոլոր մարմինների վրա:

- 59. Պետական պաշտոնյաների եկամուտների և գույքի հայտարարագրման համակարգի կայացման ուղղությամբ:** Օրենսդրորեն ներդրվել է ՀՀ քաղաքացիների գույքի և եկամուտների հայտարարագրման մեխանիզմը: 2006թ. հուլիսին ընդունված «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքը¹⁰⁷, մասնավորապես սահմանում է ֆիզիկական անձանց, այդ թվում՝ պաշտոնատար անձանց և նրանց փոխկապակցված անձանց, հայտարարագրման ենթակա գույքն ու եկամուտները, փոխկապակցված անձանց շրջանակը, հայտարարագրման պահանջները չկատարելու համար պատժամիջոցները և այլն: ՀՀ կառավարությունը սահմանել է ՀՀ իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կարևորագույն կարգերը¹⁰⁸, մեթոդական ուղեցույցները¹⁰⁹ ու ընթացակարգերը,

¹⁰⁷ «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» թիվ ՀՕ-164-Ն ՀՀ օրենքն ընդունվել է 2006թ. հուլիսի 7-ին (ուժի մեջ է 2006թ. օգոստոսի 19-ից):

¹⁰⁸ «ՀՀ իշխանության մարմինների ղեկավար աշխատողների ու նրանց փոխկապակցված անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման ձևերը, դրանց լրացման և պահպանման կարգերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 14-ի թիվ 27 որոշում (ուժի մեջ է 2002թ. փետրվարի 5-ից):

«ՀՀ իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի և եկամուտների վերաբերյալ հայտարարագրի ներկայացնողների մասին տվյալները ՀՀ կառավարությանն առընթեր Հարկային պետական ծառայություն ներկայացնելու մասին» ՀՀ կառավարության 2001թ. դեկտեմբերի 27-ի թիվ 1289 որոշում (ուժի մեջ է 2002թ. հունվարի 18-ից):

¹⁰⁹ «ՀՀ իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի և եկամուտների հայտարարագրման մի քանի հարցերի մասին» իրահանգչական նամակը հաստատելու մասին» ՀՀ պետական եկամուտների նախարարության 2002թ. հունվարի 18-ի թիվ 02/1996 որոշում (ուժի մեջ է 2002թ. փետրվարի 16-ից):

հայտարարագրերում ներառվող տեղեկությունների հրապարակման կարգը¹¹⁰: Կանոնակարգվել են նաև բնամթերային (ոչ դրամական) եկամուտներ կամ բնամթերքի, գույքի (բացառությամբ դրամական միջոցների) աշխատանքի, ծառայության, մտավոր սեփականության արդյունքի տեսքով իրավունքների փոխանցումից ստացված եկամուտների հայտարարագրման կարգերը: Օրենքը և ընդունված կարգերը կկիրարկվեն 2009թ.-ից և կտարածվեն 2008թ. ստացված եկամուտների վրա:

60. 2004, 2005, 2006 և 2007թթ. սահմանված ժամկետում Հարկային պետական ծառայություն հայտարարագրեր են ներկայացրել, համապատասխանաբար 42 123, 46 648, 55134 և 55440 հայտարարատուներ: Օրենսդրության պահանջները խախտելու համար նույն ժամանակահատվածում պատասխանատվության են ենթարկվել համապատասխանաբար 1 808 հայտարարատուներ՝ 6650.5 հազար դրամի չափով (2004թ.), 1 655 հայտարարատուներ՝ 4869.5 հազար դրամի չափով (2005թ.), համապատասխանաբար 1414 հայտարարատուներ՝ 3680.0 հազար դրամի չափով (2006թ.), 1229 հայտարարատուներ՝ 3519.5 հազար դրամի չափով (2007թ.):

61. **ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության մեջ կարևորվել է կառավարության գործունեության թափանցիկության ապահովումը, բնակչության համար տեղեկատվության մատչելիությունը, որոշումների ընդունման գործընթացներում քաղաքացիական հասարակության մասնակցությունը:** Վերջին մի քանի տարիներին Հայաստանում դրական տեղաշարժեր են արձանագրվել նաև հանրային մասնակցության զարգացման ուղղությամբ: Դրական նախադեպ է 2005 թվականից ՀՀ պետական բյուջեից հասարակական կազմակերպություններին դրամաշնորհների տրամադրման պրակտիկան: Հասարակական կազմակերպությունների ակտիվացումը կոռուպցիայի դեմ պայքարում՝ քարոզարշավների, մամուլի, հեռուստատեսության միջոցով, որոնք նոր ազդակներ հաղորդեցին հասարակությանը և հատկապես պետական մարմիններին:

62. **Պետական ծառայության մեջ պատասխանատվության, թափանցիկության, հաշվետվողականության ներդրման և զարգացման ուղղությամբ** նշանակալի նախաձեռնություններից են պետական կառավարման մարմինների կողմից տեղեկատվության տրամադրման ոլորտի բարեփոխումները: Մասնավորապես, ընդունվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները: «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածով սահմանվել են պետական և ծառայողական գաղտնիք համարվող տեղեկությունների ցանկը: ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 189.7 հոդվածով նախատեսվել է վարչական պատասխանատվություն պաշտոնատար անձանց համար նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հինգապատիկի չափով օրենքով նախատեսված տեղեկատվություն չտրամադրելու համար: Բացի այդ, ՀՀ քրեական օրենսգրքի 148 հոդվածը սահմանել է պաշտոնատար անձի համար տուգանք նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից-չորսհարյուրապատիկի չափով, անձի օրինական շահերին վերաբերող տեղեկատվության, փաստաթղթեր կամ նյութերը ոչ լրիվ կամ աղավաղված ներկայացնելու համար: 2004-2007թթ. կառավարության քաղաքականությունը ուղղվել է պետական կառավարման մարմիններում տեղեկատվության մշակումն ու տարածումը ապահովող կառույցների՝ հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումների ստեղծմանն ու կարողությունների զարգացմանը: Բոլոր պետական կառավարման մարմիններում ստեղծվել են հասարակայնության հետ կապերի կառուցվածքային ստորաբաժանումներ: Մի շարք նախարարությունների համար ստեղծվել են տեղեկատվական կենտրոն/ընդունարաններ, որոնք հանդիսանում են հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումների բաղկացուցիչ մասը: Համանման նախաձեռնություններից էր ԵԱՀԿ-ի Հայաստանյան գրասենյակի հետ և նրա օժանդակությամբ հակակոռուպցիոն հանրային ընդունարանների ստեղծումը: 2004 թվականի փետրվարի 18-ին ընդունված «Վարչարարության հիմունքների և վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերությունները կապված՝ վարչական ակտեր ընդունելու, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ:

63. **Կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության ներգրավման ուղղությամբ:** Համաձայն 2003-2007թթ. ռազմավարության կոռուպցիայի դեմ պայքարի

¹¹⁰ «ՀՀ իշխանության մարմինների ղեկավար աշխատողների ու նրանց՝ օրենքով սահմանված փոխկապակցված անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերում ներառվող տեղեկությունների վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկանքների ձևերը և դրանց լրացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 14-ի թիվ 304 որոշում (ուժի մեջ է 2002թ. ապրիլի 12-ից):

«ՀՀ իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքի համաձայն ներկայացված հայտարարագրերում ներառվող տեղեկությունների վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկանքները մամուլի միջոցներին տրամադրման մասին» ՀՀ կառավարությանն առընթեր ՀՊԾ 2003թ. մայիսի 27-ի թիվ 03/13-Ն հրաման (ուժի մեջ է 2003թ. հունիսի 26-ից):

քարոզարշավների իրականացումը հիմնականում թողնված է ՀԿ-ներին և քաղաքացիական հասարակության մյուս միավորումներին: Չնայած դրան, կառավարությունը դեռևս 2003թ. հակակոռուպցիոն ռազմավարության հաստատումից հետո իրականացրեց կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրի տեղեկացման վերաբերյալ քարոզարշավներ: Հայաստանում գործող բոլոր միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող համանման միջոցառումները կատարվել են կառավարության հետ համաձայնեցված և համագործակցությամբ: Կառավարությունը ՀԿ-ներին 2006 - 2007թթ. ՀՀ պետական բյուջեներում նախատեսված գրանտային միջոցների մի մասը նույնպես նպատակաուղղել է կոռուպցիայի դեմ պայքարի քարոզարշավների և մոնիտորինգի կազմակերպմանը: Հանրային հեռուստատեսության 2 ալիքներով պարբերաբար կազմակերպվել են «Իմ իրավունքը» և «Հակաստվեր» հաղորդաշարերը, բացի այդ այս թեմայով կազմակերպվում են ժուռնալիստների և քաղաքացիական հասարակության, պետական պաշտոնյաների մասնակցությամբ թոք շոուներ:

64. **Դրական տեղաշարժեր են արձանագրվել նաև հանրային մասնակցության զարգացման ուղղությամբ:** Մշակվեցին և կիրառվեցին հանրային մասնակցային կառավարման տարբեր մեխանիզմներ, որոնք նախադեպ հանդիսացան և հետագայում մասնակիորեն կիրառվեցին և կիրառվում են տարբեր ռազմավարական ծրագրերի մշակման գործընթացներում: Դրա հետ մեկտեղ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ներկայացված են խոշոր պետական ծրագրերի իրականացման կառավարման խորհուրդների կազմում՝ մասնավորապես, Հայաստան-Հազարամյակի մարտահրավերներ հիմնադրամում: ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից ժամանակ առ ժամանակ իրականացվում են նաև խորհրդատվության /consultancy/ և հետադարձ կապի ապահովման միջոցառումներ (օրինակ՝ իրավական փաստաթղթերի նախագծերի քննարկում, սեմինարներ, կլոր սեղան-քննարկումներ, հանրային կարծիքի ուսումնասիրություններ և այլն): Եթե նախկինում այսպիսի միջոցառումներ կազմակերպվում էին միայն դոնոր կազմակերպությունների նախաձեռնությամբ և օժանդակությամբ, ապա վերջին տարիներին մի շարք պետական կառավարման մարմիններ այդպիսի միջոցառումներ անցկացնում են սեփական նախաձեռնությամբ:
65. **Առողջապահության բնագավառում:** Կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումների շարքում կարևորվել են ոլորտում իրականացված համակարգային բարեփոխումները, ինչպիսիք են ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայությունների մատչելիության ընդլայնումը բնակչության համար: Այսօր ՀՀ բոլոր քաղաքացիները կարող են ստնալ անվճար ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություններ: Ոլորտում շարունակում է գերիշխել ոչ պաշտոնական վճարումների տեսքով կոռուպցիոն ռիսկերը՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և ծառայությունների պետական պատվերի և վճարովի առողջապահական ծառայությունների, դեղերի տրամադրման շրջանակներում: Բժշկական ապահովագրության, բժշկական ծառայությունների որակական և տեխնիկական չափորոշիչների, առողջապահության տեղեկատվական(անհատականացված) համակարգի բացակայությունը, երաշխավորված անվճար բժշկական օգնության և ծառայությունների պետական պատվերների տեղաբաշխման համակարգի անկատարությունը, վճարովի բժշկական ծառայությունների չկարգավորվածությունը շարունակում են կոռուպցիոն բարձր ռիսկեր պահպանել համակարգում:
66. **Կրթության բնագավառում:** Համակարգի բարեփոխումների շրջանակներում իրականացված միջոցառումները ուղղված են եղել նաև կոռուպցիոն ռիսկերի կրճատմանը: Մասնավորապես բարձրագույն կրթության ոլորտում կրեդիտային համակարգի ներդրումը, բուհի ընդունելության համակարգի վերակազմավորումները,բոլոր տեսակի արտոնությունների վերացումը, բուհի լիցենզավորման ընթացակարգերի հստակեցումները, բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ստանալու համար պետական պատվերների համակարգի վերափոխումները: Կրթության ոլորտում նոր ինստիտուցիոնալ կառույցների ստեղծումը, մասնավորապես հանրակրթության ավարտական և բուհի ընդունելիության քննությունների կազմակերպումը «Գնահատման և թեստավորման» կենտրոններում, հանրակրթության տեսչության ստեղծումը:Մեծ ծավալի օրենսդրական փոփոխություններն են իրականացվել ոլորտում կրթական հաստատությունների ինքնավարության, արդյունավետ, թափանցիկ և հրապարակային գործունեության ապահովման, կրթության որակի չափորոշիչների սահմանման ուղղությամբ:Կրթական հաստատություններում կադրային քաղաքականության իրականացման ուղղությամբ բարձրացվել են հանրակրթության աշխատողների վարձատրությունը մի քանի անգամ, բարելավվել է կրթական հաստատությունների ֆինանսական վիճակը:
67. **Մաքսային ոլորտում** իրականացված հակակոռուպցիոն միջոցառումները խարսխված են եղել ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրով նախատեսված օրենսդրական և ինստիտուցիոնալ մակարդակներում իրականացված բարեփոխումների վրա: Պարզեցվել է մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների, ինչպես նաև դրանց վերաբերյալ մաքսային մարմիններին հետաքրքրող տեղեկատվություն պարունակող փաստաթղթերի հետբացթողումային հսկողության ընթացակարգը: Օրենսդրական փոփոխությունների շնորհիվ սահմանային կետում հիմք է ընդունվում հայտատուի կողմից ներկայացված գինը, իսկ դրա արժանահավատության ստուգումը ըստ փաստաթղթերի իրականացվում է մաքսային ծառայության կողմից բացթողումից հետո՝ երեք տարվա ընթացքում:

Դեշտացվել է Ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ապրանքների մաքսային ձևակերպումները, ներդրվել է մաքսագերծման ինքնահայտարարագրման մեխանիզմը: Վերջինիս շնորհիվ նվազագույնի է հասցվել հայտատու - մաքսավոր փոխհարաբերությունը և բացառվել է մաքսային արժեքի հայտարարագրման ժամանակ վարչարարական միջամտությունը: Սակայն, ինքնահայտարարագրման մեխանիզմը դեռևս գործում է միայն «Միջազգային ճանապարհային փոխադրումների տարածաշրջանային» մաքսատանը, մյուս մաքսատներում այն դեռևս կիրառվում է մասնակիորեն: Բարելավվել է մաքսային հսկողության իրականացման արդյունավետությունը՝ համակարգը զինվել է ժամանակակաից տեխնիկական և տեխնոլոգիական սարքավորումներով և համակարգչային ծրագրային ապահովմամբ: Վերջինս հնարավորություն է ընձեռում քաղաքացիներին մաքսային հայտարարագրման և ձևակերպումների գործընթացը իրականացնել on-line ճանապարհով, հեշտացվել է բեռների փոխադրման ընթացքում կատարվող ստուգումների ընթացակարգը և էպես կրճատվել բեռնափոխադրման զննության ժամանակահատվածը: Մաքսային վերահսկողության ծառայության կողմից պարբերաբար արձագանքվում է քաղաքացիների կամ տնտեսվարող սուբյեկտների կողմից մաքսային գործընթացի վերաբերյալ բողոքարկման գործընթացին:

68. **Օրենքի գերակայության և օրենքի առաջ բոլորի հավասարության ապահովման գործում:** ԶԶ Սահմանադրության մեջ փոփոխությունների կատարմամբ առավել հստակեցվեցին իշխանության բոլոր ճյուղերի գործառույթներն ու լիազորությունները, նվազագույնի հասցվեց իրավունքների և պարտականությունների կրկնությունները, ընդունվեցին նոր «Պատական օրենսգիրքը», «Վարչական դատավարության օրենսգիրքը» «Վերահսկիչ պալատի մասին», «Պատախազության մասին» օրենքները և մի շարք այլ օրենքներ: ԶԶ Նախագահի 18.07.2007թ. ՆՅ-174-Ն հրամանագրով¹¹¹ իրավական ակտերի նախագծերի մշակման և ընդունման փուլերում հստակեցվեցին ԶԶ կառավարության և պետական կառավարման այլ մարմինների գործառույթները: Իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննության իրականացման ուղղությամբ փորձ արվեց Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի կողմից ստեղծված աշխատանքային խմբերի միջոցով իրավական ակտերը ենթարկել հակակոռուպցիոն փորձաքննության: Իրավական ակտերը հասարակության համար հասանելի դարձնելու նպատակով ԶԶ օրենսդրական ակտերի տեղեկատվական բազան տեղադրվեց ինտերնետային առանձին կայքում՝ (arlis.am), առավել մատչելի դարձավ «ԻՈՏԵԿ» համակարգը, ԶԶ պետական կառավարման մարմինների ինտերնետային կայքերը պարբերաբար թարմացվում են իրավական ակտերի նախագծերով և ընդունված ակտերով, հրապարակվում է «Պաշտոնական տեղեկագիր» պարբերականը:
69. **Իրավապահ մարմիններ:** 2003-2007 թվականների ընթացքում ԶԶ Սահմանադրության փոփոխություններով Հայաստանի Հանրապետությունում «իրավապահ համակարգի» ինստիտուցիոնալ բարեփոխումների սկիզբը դրվեց: Բարեփոխումների արդյունքում «Պատախազության մասին» օրենքով տարրանջատվեցին նախաքննություն վարելու և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու գործառույթները: Նախաքննություն և հետաքննություն իրականացնելու գործառույթը փոխանցվեց ԶԶ ոստկանությանը, իսկ մասամբ ԶԶ ԿԼ մաքսային պետական կոմիտեին, հարկային պետական ծառայությանը և ԶԶ պաշտպանության նախարարությանը: Փոփոխվեց նաև ԶԶ գլխավոր դատախազի նշանակման կարգը, ինչպես նաև սահմանափակվեց պաշտոնավարման ժամկետը: Սահմանվեց դատախազության անկախության և հրապարակայնության երաշխիքներ: ԶԶ «Քրեական» և «Քրեական դատավարության» օրենսգրքերով հստակեցվեցին, ամբողջականացվեցին և միջազգային կոնվենցիաների դրույթներին համապատասխանեցվեցին «պաշտոնատար անձ» հասկացությունը, կոռուպցիոն հանցագործությունների սուբյեկտները, պատժաչափերը, հանցավոր ճանապարհով (կոռուպցիոն հանցագործությունների արդյունքում) ստացված եկամուտների, օգուտների բռնագանձման մեխանիզմները: «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ԶԶ օրենքով սահմանվեցին օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները, նրանց իրավունքները և պարտականությունները, օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները, օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ հսկողությունը և վերահսկողությունը: Բարելավվել են իրավապահ մարմինների նյութատեխնիկական հագեցվածությունը, համապատասխան տրանսպորտային և տեխնիկական միջոցներով: Մի շարք գիտագործնական սեմինարների, վերապատրաստման դասընթացների և այլ բարձրացվել է կոռուպցիայի դեմ ներգրավված իրավապահ մարմինների աշխատակիցների մասնագիտական որակավորման աստիճանը և կոռուպցիայի դեմ պայքարի կարողությունները: ԶԶ օրենսդրությունում ամրագրվել են դրույթներ, որոնք ուղղակի բխել են միջազգային պայմանագրերից, մասնավորապես՝ օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների պաշտոնատար անձինք ընդգրկվել են ԶԶ քրեական օրենսգրքով սահմանված «պաշտոնատար անձ» հասկացության մեջ, «Առևտրային կաշառք» հոդվածի նախատեսմամբ քրեականացվել է կաշառքը մասնավոր հատվածում, «Քրեական դատավարության օրենսգրքով» և «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների

¹¹¹ ԶԶ Նախագահի 18.07.2007թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՆՅ-174-Ն հրամանագիր:

օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանվել են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների վլացման կանխարգելման ընթացակարգեր:

70. **Ղատական համակարգ:** Անկախ դատական համակարգի կայացման ուղղությամբ իրականացվեցին համակարգային փոփոխություններ, ինչպես նոր օրենսդրական դաշտի ստեղծման, այնպես էլ կառուցվածքային բարեփոխումներով: ՀՀ Սահմանադրության փոփոխություններով ամրագրվեցին դատական համակարգի անկախության և բնականոն գործունեության նախադրյալները, որոնք իրենց մանրամասն ու առարկայական արտահայտությունները գտան ընդունված մի շարք օրենքներում: ՀՀ դատական օրենսգրքի ընդունմամբ ստեղծվեցին ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարաններ (քրեական, քաղաքացիական, վարչական) ինչը հնարավորություն ընձեռեց առավել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննել գործերը, ստեղծվեց դատական դեպարտամենտը և կարգադրիչների ինստիտուտը: Կանոնակարգվեցին դատավորների գործունեության սկզբունքները, նշանակման կարգը, անկախության երաշխիքները, վարքագծի կանոնները, վերջիններիս պատասխանատվության ենթարկելու հիմքերը և կարգը, սահմանվեցին արդարադատության խորհրդի լիազորությունները, դատավոր անդամների ընտրության կարգը: Հիմնադրվեց դատական դպրոցը, որը ապահովում է դատավորների թեկնածուների որակավորման ստուգումը, դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումը, դատական ծառայողների մասնագիտական վերապատրաստումը: Վարչական դատավարության օրենսգրքով սահմանվեցին նորաստեղծ վարչական դատարանում և վճռաբեկ դատարանում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական և նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը, ինչպես նաև ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության կարգը: «Քրեկատարողական ծառայության մասին» ՀՀ նոր օրենքով հստակեցվեցին քրեակատարողական ծառայության գործունեության հիմնական սկզբունքները, քրեակատարողական ծառայության մարմինների, դրանց գործունեության կազմակերպման սկզբունքները, ծառայություն անցնելու կարգը և պայմանները, ծառայողների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, իրավական ու սոցիալական երաշխիքները ինչպես նաև ծառայության հետ կապված այլ հարաբերություններ: Մեծ նշանակություն ունեցավ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի ընդունումը մրցակցային դատական համակարգի կայացման հարցում, որով սահմանվեցին փաստաբանության գործունեության հիմնական սկզբունքները՝ այն է անկախությունը, օրինապահությունը, ինքնակառավարումը, փաստաբանների իրավահավասարությունը: Ամրագրվեցին նաև փաստաբանների իրավունքները և պարտականությունները, գործունեության անկախության իրավական պաշտպանության երաշխիքները, արտոնագրման ընացակարգերը, պատասխանատվությունը և այլն: Բացի վերոգրյալ օրենսդրական բարեփոխումները, էական քայլեր ձեռնարկվեցին դատավորների սոցիալական վիճակի բարելավման, դատարանների նյութատեխնիկական հնարավորությունների զարգացման գործում:

71. ՀՌԻՄԾ հանդիսանալով մի քանի տարվա ծրագրային փաստաթուղթ՝

- ապահովում է տարբեր ոլորտներում և բնագավառներում կոռուպցիայի դեմ պայքարի հիմնախնդիրների կապն այդ ոլորտների և բնագավառների զարգացման պետական քաղաքականության գերակայությունների հետ: Այդուհանդերձ, ՀՌԻՄԾ-ն չի ներառել նշված ոլորտներում և բնագավառներում կոռուպցիայի դեմ պայքարի հստակ, չափելի և հասանելի նպատակներն ու խնդիրները, չի ամբողջականացնում նշված հիմնախնդիրների լուծման գործում միջոցառումների իրականացման արդյունքների միարժեք դերակատարումը, ինչպես նաև բոլոր հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ միջոցառումները: ՀՌԻՄԾ-ում բացակայում էր նաև նշված ոլորտներում և բնագավառներում կոռուպցիայի մակարդակի գնահատման համակարգը:
- Նշում է կոռուպցիայի տարբեր տեսակներն ու դրսևորումները մի շարք ոլորտներում և բազմաթիվ բնագավառներում: Մինչդեռ, այդ բնագավառներում և ոլորտներում կոռուպցիոն դրսևորումների դեմ պայքարի միջոցառումները ամբողջական չեն եղել, բացի այդ ՀՌԻՄԾ չի անդրադարձել տնտեսության կարևորագույն այլ ոլորտների և բնագավառների, ինչպիսիք են տրանսպորտը, սոցիալական ապահովությունը և այլն:
- Նշում է կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի երեք հիմնական միջոցները. կոռուպցիայի կանխարգելում, կոռուպցիոն հանցագործությունների բացահայտում և հետապնդում, կոռուպցիայի վերաբերյալ հանրության իրազեկում և կոռուպցիայի դեմ հանրային աջակցության ապահովում: Այդուհանդերձ, ՀՌԻՄԾ միջոցառումներն՝ համեմատաբար թույլ են ընդգրկել կոռուպցիայի դեմ պայքարի մյուս երկու միջոցները:

72. ՀՌԻՄԾ-ն նախատեսում էր ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականության և ծրագրերի համակարգման և մոնիտորինգի համակարգի ձևավորումը: Այդուհանդերձ, ՀՌԻՄԾ-ն չի ներառել բովանդակային կատարողական մոնիտորինգի և հաշվետվությունների ամփոփման պահանջները, այդ թվում՝ արդյունքների տարեկան ամփոփման պահանջները:
73. ՀՌԻՄԾ միջոցառումների իրականացման մեխանիզմները պատշաճ կերպով չեն ապահովել պետական կառավարման մարմինների կողմից հակակոռուպցիոն կոնկրետ ծրագրերի մշակմանը քաղաքացիական հասարակության կառույցների արդյունավետ մասնակցությունը: Բացակայում են նաև ՀՌԻՄԾ-ի ամենամյա վերանայման և տարեկան ծրագրերի մշակման և հաստատման մեխանիզմները:
74. Այսպիսով, հիմք ընդունելով ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2003-2006թթ. միջոցառումների ծրագրի արդյունքները, ինչպես նաև կոռուպցիայի մակարդակի գնահատման միջազգային ցուցանիշներն ու տեսակները, դրանց միտումների վերլուծությունը, կարել է եզրակացնել, և առանձնացնել հետևյալ հիմնական քաղաժ դասերը.
- Կոռուպցիայի մակարդակը Հայաստանում մնում է բարձր՝ այն կրում է համակարգային բնույթ:
 - ՀՌԻՄԾ-ն չի ներառել կոռուպցիայի դեմ պայքարի հստակ, չափելի և հասանելի մպատակներ ու խնդիրներ, կողմնորոշված չի եղել կոնկրետ արդյունքների ստացմանը, չի ամբողջականացրել հիմնախնդիրների լուծման գործում միջոցառումների իրականացման արդյունքները:
 - ՀՌԻՄԾ միջոցառումներն հիմնականում կողմնորոշված են եղել կոռուպցիայի կանխարգելմանը, համեմատաբար թույլ են ընդգրկել կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և հետապնդման, կոռուպցիայի վերաբերյալ հանրության իրազեկման և հանրային աջակցության միջոցները: Հանրության կրթության, քարոզչության, քաղաքացիական հասարակության մասնակցության գործընթացներն իրականացվել են քաղաքացիական հասարակության կողմից:
 - ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականության, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի համակարգը դեռևս ձևավորման փուլում է: Այն ամրապնդված չէ գործունե մեխանիզմներով: Իրականացվող մոնիտորինգը վարչական է և սահմանափակվում է օրենսդրական նախաձեռնությունների վերաբերյալ կոնկրետ նախագծերի ընդունման մասին որոշումների կայացմամբ: ՀՌԻՄԾ-ն չի ներառել ըստ ոլորտների և բնագավառների կոռուպցիայի մակարդակի գնահատման համակարգը, բովանդակային կատարողական մոնիտորինգի և հաշվետվությունների պահանջները, այդ թվում՝ արդյունքների տարեկան ամփոփման պահանջները, ընթացիկ իրավիճակի չափելի նկարագիրը և միջոցառումների իրականացման ելքերի և արդյունքների գնահատման ցուցիչները:
 - ՀՌԻՄԾ իրականացման մեխանիզմները պատշաճ կերպով չեն ապահովվել պետական կառավարման մարմինների կողմից հակակոռուպցիոն կոնկրետ ծրագրերի մշակումը, քաղաքացիական հասարակության կառույցների հետ համագործակցությունը, նրանց արդյունավետ մասնակցությունը: Բացակայում են նաև ՀՌԻՄԾ-ի ամենամյա վերանայման և տարեկան ծրագրերի մշակման և հաստատման մեխանիզմները:

1.3. Կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային¹¹² պարտավորությունները

75. Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ ստանձնած պարտավորությունները վերահաստատվեցին 2003թ. օգոստոսին ընդունված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում (ԱՀՌԾ)¹¹³: ԱՀՌԾ-ն մասնավորապես ամրագրում էր աղքատության հիմնախնդրի հաղթահարման անմիջական կապը կոռուպցիոն երևույթների վերարտադրությունը սահմանափակելու, ինչպես նաև դրա նոր, առավել վտանգավոր տարատեսակները կանխելու պայքարի արդյունավետության հետ: ԱՀՌԾ-ն կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականության գերակայությունը տալիս էր կանխարգելիչ միջոցառումներին հետևալ հիմնական ուղղություններում. (i) տնտեսական դաշտում առկա հիմնախնդիրների լուծում և տնտեսության ստվերայնության կրճատում, (ii) քաղաքական կոռուպցիայի դեմ պայքար, (iii) կոռուպցիայի հաղթահարում պետական կառավարման, դատաիրավական համակարգի և տեղական ինքնակառավարման բնագավառներում: Ընդ որում, հակակոռուպցիոն ռազմավարության իրագործման հաջողությունը ԱՀՌԾ-ն պայմանավորում էր ՀՌԻՄԾ իրագործման և մոնիտորինգի գործառնությունների արդյունավետությունից:
76. ՀՀ կառավարությունը կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականությունն ամբողջականացրեց 2003թ. նոյեմբերին ընդունված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրում¹¹⁴: 2004թ.-ից հունվարից կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունները շարունակաբար ընդլայնվել են, իսկ այդ ոլորտում վարվող պետական քաղաքականությունը շաղկապվել և համադրվել է երկրի կայուն զարգացման գերակայություններին, 2008թ.-ին դառնալով կառավարության գործունեության գլխավոր ուղղություններից մեկը:
77. Այսպես, 2004թ. հունվարին երկիրը դարձել է ԳՐԵԿՈ-ի անդամ¹¹⁵, իսկ 2004թ. հունիսին և դեկտեմբերին, համապատասխանաբար, ստորագրել և վավերացրել է «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիան և «Կոռուպցիայի մասին» քաղաքացիական իրավունքի կոնվենցիան: Հայաստանի կառավարության կողմից հակակոռուպցիոն միջոցառումների արդյունավետության գնահատման առաջին և երկրորդ փուլերի հարցաշարերի պատասխանները, որի հիման վրա Հայաստանի մասին ԳՐԵԿՈ-ի առաջին զեկույցն ընդունվել է 2006թ. մարտին: Ձեկույցը նախանշել է 24 առաջարկություններ՝ ուղղված կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում առկա իրավիճակի բարելավմանը¹¹⁶: ԳՐԵԿՈ-ի առաջարկությունների մեծամասնությունը կանխարգելիչ և բացահայտող բնույթի են և հիմնականում (24 առաջարկությունից՝ 20-ը) նպատակաուղղված են օրենքների և ընթացակարգերի ընդունմանն ու բարելավմանը: Վեց առաջարկություն վերաբերում են հանրային ծառայողների և աուդիտորների վերապատրաստմանը, մեկով առաջարկվում է համապատասխան ուսումնասիրությունների իրականացումը՝ բացահայտելու կոռուպցիայի և դրա դրսևորումների առավել ամբողջական պատկերը Հայաստանում, իսկ մյուսը կարևորում է հակակոռուպցիոն միջոցառումների և դրանց իրականացման արդյունքների վերաբերյալ հանրության կանոնավոր իրազեկման ամհրաժեշտությունը: ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը հաստատել է ԳՐԵԿՈ-ի առաջարկությունների կատարման ապահովող միջոցառումների ծրագիր: 2007թ. սեպտեմբերի 30-ը ՀՀ -ի կողմից ԳՐԵԿՈ-ի առաջարկությունների կատարման վերաբերյալ միջանկյալ իրավիճակային զեկույցի ներկայացման համար սահմանվել է վերջնաժամկետ: Առաջարկությունների կատարման համապատասխանության վերաբերյալ Հայաստանի վերջնական զեկույցը քննարկվել և ընդունվել է ԳՐԵԿՈ-ի 2008թ. հունիսյան նիստում:
78. Հայաստանը ներգրավված է նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ)՝ նախկին խորհրդային 8 երկրների համար նախաձեռնած «Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների պլան» ծրագրում¹¹⁷: ՏՀԶԿ-ի «Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների պլանը» ներառում է Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Ռուսաստանը, Տաջիկստանը և Ուկրաինան: Այն կոչված է

¹¹² «միջազգային» տերմինը այստեղ օգտագործվում է այն իմաստով, որ այս փաստաթղթերը սահմանված են համապատասխան կոնվենցիաներով և համաձայնագրերով, որոնք վերջին հաշվով հաստատվել են ՀՀ ԱԺ-ի կողմից և իրավաբանորեն ճանաչվում են որպես Հայաստան Հանրապետության օրենսդրության բաղկացուցիչ մաս:
¹¹³ «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003թ. օգոստոսի 8-ի թիվ 994-Ն որոշում (ուժի մեջ է 2003թ. սեպտեմբերի 27-ից):
¹¹⁴ «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 6-ի թիվ 1522-Ն որոշում (ուժի մեջ է 2003թ. դեկտեմբերի 20-ից):
¹¹⁵ <http://www.greco.coe.int>
¹¹⁶ նույն տեղում:
¹¹⁷ <http://www.oecd.org/corruption/acn>.

բարելավելու նշված երկրների հակակոռուպցիոն քաղաքականությունը միջազգային փորձագետների կողմից մշակված առաջարկությունների միջոցով: Հայաստանին վերաբերող առաջարկությունները մշակվել և ընդունվել են 2004թ. հունիսի 15-18-ին Փարիզում կայացած հանդիպման ժամանակ: ՏՀԶԿ-ի 24 առաջարկությունները դասակարգված են երեք խմբերում. 1) «Ազգային հակակոռուպցիոն քաղաքականություն և ինստիտուտներ» (7 առաջարկություն). 2) «Օրենսդրություն և կոռուպցիայի քրեականացում» (8 առաջարկություն). 3) «Քաղաքացիական ծառայության թափանցիկություն և ֆինանսական վերահսկողություն» (9 առաջարկություն): ՏՀԶԿ-ի 1-ին, 5-րդ, 8-րդ, 10-րդ, 12-րդ, 17-րդ և 20-րդ առաջարկությունները ամբողջովին կամ մասամբ հանդնկնում են ԳՐԵԿՈ-ի համապատասխան առաջարկությունների հետ: Հայաստանի կառավարությունը ՏՀԶԿ-ի հակակոռուպցիոն ցանցի քարտուղարությանը պարբերաբար (տարեկան 2 անգամ) զեկուցում է առաջարկությունների կատարման գործընթացի վերաբերյալ: Երկրի զեկույցները ներկայացվել են 2004թ. դեկտեմբերին, 2005թ. հունիսին ու հոկտեմբերին, 2006թ. հունիսին ու դեկտեմբերին, 2007թ. սեպտեմբերին: 2006թ. դեկտեմբերին Փարիզում տեղի ունեցած ՏՀԶԿ-ի մոնիտորինգի 6-րդ հանդիպման ընթացքում քննարկվել է Հայաստանի առաջընթացը առաջարկությունների կատարման գործում և ընդունվել երկրի գնահատման (մոնիտորինգի) զեկույցը¹¹⁸: Ձեկույցն ընդգծել է մի շարք դրական միտումներ, մասնավորապես 24 ներկայացված առաջարկություններից միայն 4-ն է գնահատվել «չկատարված», 11 առաջարկություն՝ «մասնակի կատարված», 8 առաջարկություն՝ «հիմնականում կատարված է» և 1 առաջարկություն՝ «ամբողջությամբ կատարված»: Միաժամանակ զեկույցը նշել է, որ իրականացված միջոցառումներից շատերը միայն առաջին քայլն են կոռուպցիայի նվազեցման ճանապարհին և որ դեռևս մեծ աշխատանք է պահանջվում թեթևացնելու կոռուպցիայի «բեռը» հանրային և տնտեսական կյանքի տարբեր ոլորտներում¹¹⁹:

79. Եվրամիության եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) շրջանակներում Եվրոպական միությունն ու Հայաստանը 2006թ. նոյեմբերին վավերացրել են գործողությունների ծրագիրը, որում կոռուպցիայի դեմ պայքարը ներառված է որպես գերակա ոլորտ¹²⁰: Հայաստանի գործողությունների ծրագրում հատուկ գերակայությունների մեջ ներառվել են 8 հակակոռուպցիոն միջոցառումներ, այդ թվում՝ պատշաճ քննության ապահովումը և կոռուպցիոն հանցանքների հետապնդումը, Քրեական օրենսգրքի համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին, դատավորների և դատախազների էթիկայի կանոնների մշակումը, պաշտոնյաների կողմից գույքի և եկամտի սխալ հայտարարագրման դեպքում պատասխանատվության սահմանումը, դատավորների աշխատավարձերի բարձրացումը և այլն: Այս գործողությունների ծրագրում նշված համարյա բոլոր միջոցառումները միաժամանակ ներառված են նաև ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի «Քրեական իրավունքի մասին» և «Քաղաքացիական իրավունքի մասին» կոնվենցիաներում, ԳՐԵԿՈ-ի ու ՏՀԶԿ-ի առաջարկություններում:
80. 2005թ. մայիսին ԶԳ-ը ստորագրել է Միավորված ազգերի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիան (ՄԱԿԴԿ)¹²¹, որը վավերացվել է ԶԳ Ազգային ժողովի կողմից, 2006թ. հոկտեմբերին: Կոնվենցիան անդրադառնում է կոռուպցիայի կանխարգելիչ միջոցառումներին, կոռուպցիայի քրեականացմանը և օրենքների կիրառմանը, միջազգային համագործակցությանը, ակտիվների վերականգնմանը, տեխնիկական աջակցությանը և տեղեկատվության փոխանակմանը, ինչպես նաև կոնվենցիայի դրույթների իրականացման մեխանիզմներին: 2006թ. դեկտեմբերին Զորդանանում կայացած՝ ՄԱԿԴԿ-ը վավերացրած պետությունների առաջին հանդիպմանը որոշվել է սահմանել մոնիթորինգի մեխանիզմ, որը կպարունակի պարտադիր և կամավոր դրույթներ, ինչպես նաև հիմնել միջազգային հիմնադրամ իրավական գծով փորձագետների համար ու մշակել դատական և իրավապահ մարմինների կարողությունների զարգացման համաշխարհային ծրագիր: Որպես կոնվենցիայի պահանջների մոնիտորինգի իրականացման նախնական փուլ, Հայաստանը պետք է ՄԱԿ-ի Թմրամոլության և հանցավորության դեմ զբաղմունքային ներկայացնի ՄԱԿ-ի «կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի Հայաստանի ինքնազննատման զեկույցը՝ վերջինիս կողմից նախապատրաստված հարցաշարերին համապատասխան:
81. 2006թ. մարտին ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր կորպորացիան» 235.65 միլիոն ԱՄՆ դոլարի հնգամյա համաձայնագիր է ստորագրել Հայաստանի Հանրապետության Կառավարության հետ: 2006թ. մայիսին ԶԳ Ազգային ժողովը վավերացրեց Հայաստանի Հանրապետության կառավարության և ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի միջև կնքված համաձայնագիրը: Ըստ համաձայնագրի ԶԳ կառավարությունը կպահպանի Հազարամյակի մարտահրավերների հիմնադրամի չափորոշիչների նկատմամբ ստանձնած իր պարտավորությունը: Վերջիններս են՝ (ա) քաղաքականություններ, որոնք խորացնում են ժողովրդավարական գործընթացները, ամրապնդում են դատաիրավական համակարգը և խթանում են տնտեսությունում մասնավոր հատվածի ներգրավվածության մեծացման հանգամանքը, (բ) տնտեսական աճի միջոցով աղքատության հաղթահարում, (գ) Խորհրդատվական գործընթացներ,

¹¹⁸ http://www.oecd.org/document/35/0,2340,en_2649_34857_37846947_1_1_1_1,00.html.

¹¹⁹ նույն տեղում:

¹²⁰ http://www.aeplac.am/pdf/enp_ap_arm.pdf.

¹²¹ http://www.unodc.org/pdf/crime/convention_corruption/signing/Convention-e.pdf.

որոնց շրջանակներում ակնկալվում է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավումը այնպիսի որոշումների ընդունման գործընթացում, որոնք ազդում են վերջիններիս զարգացման վրա, (դ) անաչառ ընտրությունների, «բաց» տնտեսության և անկախ դատորդների, քաղաքացիների մասնակցության մոնիտորինգի միջոցով առաջընթացի ապահովում: Այս չափորոշիչների կատարողականի գնահատման համար մոնիտորինգի կենթարկվի ՀՀ կառավարության գործունեությունը այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների, կոռուպցիայի վերահսկելիության, կառավարման արդյունավետության, օրենքի գերակայության, ինչպես նաև «քաղաքացիների ձայնի լսելիության և հաշվետվողականությունը», որոնք կորպորացիայի համար նախանշված են արդարացի կառավարման ցուցանիշներ:

82. 2005թ. դեկտեմբերին ստորագրված ՆԱՏՕ-ի հետ ՀՀ Անհատական գործընկերության գործողությունների ծրագրով, ՀՀ կառավարությունը պարտավորվել է ակտիվորեն մասնակցել ԳՐԵԿՈ-ի գործունեությանն ու իրականացնել ԳՐԵԿՈ-ի առաջարկությունները, իրականացնել ՀՌԻՄԾ-ն, ներդնել պետական պաշտոնյաների կողմից կոռուպցիայի կանխարգելման և հետապնդման հստակ և թափանցիկ հաշվետվողականության մեխանիզմ, բարելավել իրազեկումը կոռուպցիայի վերաբերյալ՝ պետական պաշտոնյաների ուսուցման և վերապատրաստման միջոցով¹²²:
83. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով ստանձնած հակակոռուպցիոն պարտավորությունների մանրամասն նկարագրությունը, կատարման ընթացքը, առկա խնդիրներն ու դրանց հասնելու վերաբերյալ առաջարկությունները տրված են սույն ռազմավարության համապատասխան ոլորտային բաժիններում:

¹²² ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի Հանրապետության անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը ստորագրվել է 2005թ. դեկտեմբերի 16-ին: